Ազգ
Azg
17 ԱՊՐԻԼ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 61(5144)
ISSN: 1829-1651

# Երկու վարկած Բոստոնի պայթյուններից հետո

## Առաջին ահաբեկչությունը սեպտեմբերի 11-ից ի վեր

Բոստոնում ապրիլի 15-ին 117-րդ անգամ անցկացված միջազգային մարաթոնի եզրագծի մոտ որոտացին ուժգին պայթյուններ: Կան զոհեր եւ բազմաթիվ վիրավորներ:

Վիրավորներից 17-ի վիճակը օրհասական է: Զոհերից մեկը 8-ամյա մի տղա է, որը առաջին պայթյունի պահին հանդիսականների մեջ էր: Բոստոնի մանկական հիվանդանոցից ԶԼՄ-ներին հայտնել են դեպքի վայրից հիվանդանոց տարված առնվազն ութ երեխաների մասին:

ABC հեռուստաալիքը հաղորդում է, որ մարաթոնին մասնակցում էին 90 երկրների 23 հազար վազորդներ: Եզրագծին հասնողների թիվը 17580 է: Բոստոնում ապրիլի 15-ին նշվում էր Հայրենասերի օրը:

Պայթյուններից առաջինը որոտաց Marathon Sports խանութի մոտ, իսկ 12 վայրկյան անց տեղի ունեցավ երկրորդ պայթյունը: Վիրավորների մեջ կան վազորդներ, ոստիկաններ, միջոցառման կազմակերպիչներ: Ականատեսներին վկայակոչելով՝ Fox News հեռուստաալիքը հաղորդում է, որ տուժածներից շատերը զրկվել են վերջույթներից: Պայթյուններից հետո խուճապ էր սկսվել:

Սակրավորները գտել են 5 չպայթած ռումբեր: Պայթյուններից մեկը տեղի էր ունեցել քաղաքի Ջոն Քենեդիի անվան գրադարանի մոտ:

ԱՄՆ իշխանությունները խոսում են ահաբեկչության մասին, որը առաջինն է 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո: Ծայրահեղական կազմակերպություններից ոչ մեկը առայժմ պատասխանատվություն չի ստանձնել Բոստոնի պայթյունների համար: Նախագահ Բարաք Օբաման իր ելույթում ժողովրդին խոստացել է գտնել ոճրագործներին: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ցավակցություն է հայտնել ամերիկացիներին, ավելացնելով, որ Ռուսաստանը պատրաստ է ԱՄՆ-ին օգնել ահաբեկչության կազմակերպիչների բացահայտման գործում:

Ահաբեկիչների որոնումներով զբաղվում է ՀԴԲ-ն: Պայթուցիկ սարքերը լցոնված են եղել ոչ թե պլաստիկով, այլ ծխային վառոդով, ինչպես նաեւ մետաղագնդիկներով: Դա թույլ է տալիս անել երկու հետեւություն: Առաջինն այն է, որ գործ ունենք ինքնաշեն պայթուցիկ սարքերի հետ: Երկրորդն այն է, որ հանցագործները ձգտել են ոչ թե սպանել, այլ խեղանդամ դարձնել հնարավորինս մեծ թվով մարդկանց:

Պայթյուններից քիչ հետո ոստիկանությունը մարաթոնի եզրագծի մոտ ձերբակալեց Սաուդյան Արաբիայի վիրավոր քաղաքացու, որին կասկածում են ահաբեկչությանը մեղսակից լինելու մեջ, հաղորդում է «Նյու Յորք փոստ» թերթի կայքէջը: Պայթյուններ իրականացնողների եւ կազմակերպիչների որոնումները շարունակվում են: Հաղորդվում է, որ փնտրում են ուսապարկով սեւամորթ կամ թխամորթ մի տղամարդու, ինչպես նաեւ այն մարդուն, որը շենքերից մեկի տանիքին կանգնած դիտել էր պայթյունները:



Դրանցից անմիջապես հետո Բոստոնում անջատվել էր բջջային հեռախոսակապը, որպեսզի ահաբեկիչները չկարողանային հեռակառավարմամբ պայթեցնել ուրիշ ռումբեր, հաղորդում է WBUR News կայքէջը:

Ներկայումս Բոստոնի պայթյունների կապակցությամբ առաջադրված է երկու հիմնական վարկած, նշում է «Բոստոն գլոբ» թերթը: Առաջինի համաձայն, ահաբեկչությունն իրականացրել են իսլամիստները, որոնք հաճախ նման քայլերի են դիմում տոների առթիվ. ապրիլի 15-ին Մասաչուսեթսում նշվում էր ԱՄՆ անկախության պատերազմի հետ կապված Հայրենասերի օրը: Երկրորդ վարկածի համաձայն, չարագործները ամերիկացի աջ ծայրահեղականներ են, օրինակ՝ հակակառավարական եւ հակահարկային ակտիվիստներ. ապրիլի 15-ը ԱՄՆ-ում հարկերի վճարման օրն է:

Պ. Ք.

# Ցուցարարները չեն ուզում, ոստիկանները չեն կարող



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

«Ժառանգության» փոխնախագահ **Ռուբեն Հակոբյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանը տվել է 2008-ի մարտի մեկի եւ 2013-ի ապրիլի 9-ի, ըստ իրեն, գլխավոր տարբերակիչ գործոնները: Պարոն Հակոբյանի կարծիքով՝ «Րաֆֆի Հովհաննիսյանը Լեւոն Տեր-Պետրոսյան չէ, ու այսօրվա ոստիկանությունն էլ 2008-ի ոստիկանությունը չէ»:

Ճիշտ է, հավանաբար «Ժառանգության» մեկ այլ փոխնախագահի, քաղաքապետի թեկնածու Արմեն Մարտիրոսյանին, իր իսկ խոսքերով՝ ոտքով հարվածած ոստիկանը «եկել էր» դեռ 2008-ից կամ «պահպանվել էր», բայց ըստ էության, իրոք ոստիկանությունը փոխվել է: Օրինակ՝ 2008-ին ոստիկանապետը հրապարակ չէր գա ու չէր միանա Տեր-Պետրոսյանին՝ Ծիծեռնակաբերդի ճանապարհին: Գուցե որովհետեւ Տեր-Պետրոսյանն այդ ճանապարհը երբեք չէ՞ր նախաձեռնի: Ի վերջո եւ 2008-ին, եւ 2013-ին ցուցարարների առաջին շարքում կային սադրիչներ, որոնք փորձում էին բախում հրահրել ոստիկանների հետ, նաեւ կանայք, որոնք անպատվում էին իրենց առջեւ կանգնած, իրենց տղաների տարիքի ոստիկաններին, որովհետեւ վերջիններս «ապօրինի իշխանությունների ապօրինի որոշումներ են կատարում» ու «դուք եք եկել ժողովրդի դեմ»... Այն ժամանակ այս ու այլ մի շարք բաները հանգեցրին աղետի, հիմա, փաստորեն, հրապարակում այլ ընդդիմություն էր ու այլ ոստիկան:

Իհարկե, ինչպես ամեն փոփոխություն, այս մեկն էլ չի նշանակում կանգառ, ինչպես երկիրը, այնպես էլ երկրում ամեն բան ենթակա է պարտադիր ու անընդհատ փոփոխության: Օրինակ՝ մեր ոստիկանությունում արդեն քիչ չեն կին ոստիկանները, ու պատկերացրեք, թե ի՞նչ կլիներ, եթե բողոքավոր ժողովրդի դիմաց, առաջին շարքում հենց նրանք կանգնեին, ոչ թե սարսափ ու վախ ներշնչելու, այլ լարվածությունը թուլացնելու, ցասումը մարելու նպատակով:

Տես էջ 2

# Առաջիկա օրերին տեղումները չեն դադարի

Առաջիկա մի քանի օրերին Հայաստանի ողջ տարածքում սպասվում են տեղումներ: Արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոմետ ծառայության փոխանցմամբ՝ ապրիլի 17-21-ին հանրապետության ողջ տարածքում ժամանակ առ ժամանակ կլինեն տեղումներ. անձրեւ, տեղ-տեղ ամպրոպ, Լոռիում, Տավուշի, Սյունիքի նախալեռներում ու լեռնային շրջաններում սպասվում է թաց ձյուն:



Երեւանում 17-21-ին ժամանակ առ ժամանակ կտեղա անձրեւ, սպասվում են նաեւ ամպրոպ եւ ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում: Եվ այսօրվանից տարբեր շրջաններում օդի ջերմաստիճանը կնվազի 3-5 աստիճանով, Լոռիում, Տավուշում ու Սյունիքում կնվազի նույնիսկ մինչեւ 5-7 աստիճանով:

Ի. Պ.

# Փոլադ Բյուլբյուլօղլին նշանակվելու է Թուրքիայում դեսպան

Թուրքիայում Ադրբեջանի դեսպան Ֆաիգ Բաղըրովը առաջիկայում հետ կկանչվի եւ նրա փոխարեն, հավանաբար, այդ պաշտոնում կնշանակվի Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլին: Այս մասին, ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, հայտնում է publika.az լրատվական կայքը:

Ենթադրվում է, որ Բաղըրովը դեսպան կնշանակվի եվրոպական երկրներից մեկում: Ադրբեջանի կառավարությունը մտադիր է Ռուսաստան ուղարկել ավելի փորձառու դիվանագետի:

Ադրբեջանական aznews.az լրատվական կայքը նախօրեին հայտնել էր, որ Բյուլբյուլօղլին օրերս կանչվել է Բաքու, որտեղ նրան տեղեկացրել են ՌԴ-ում Ադրբեջանի դեսպանի պաշտոնից հեռացնելու մասին եւ քննարկել հետագա անելիքները, եւ որ նրա փոխարեն, հնարավոր է, ՌԴ-ում Ադրբեջանի դեսպան նշանակվի ներկայումս Սերբիայում, Մոնտենեգրոյում եւ Բոսնիա- Հերցոգովինայում Ադրբեջանի դեսպան Էլդար Հասանովը:

# «Նորակառույց բնակարանների պահանջարկն ավելի մեծ է, բայց նորակառույցների պահանջարկը բացակայում է»

## Տնտեսությանը եւ անշարժ գույքի շուկային անդրադարձան Գործատուների հանրապետական միության նախագահը եւ «Ակցեռն» գործակալության տնօրենը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ինչպիսի՞ ազդեցություն է թողնում անշարժ գույքի շուկայի վրա ընտրական գործընթացը հարցին» պատասխանելով երեկ «Հայելի» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ «Ակցեռն» անշարժ գույքի գործակալության տնօրեն **Հակոբ Բաղդասարյանն** ասաց, որ ընտրությունները բնակարանային ֆոնդի գործարքների վրա ազդեցություն չեն թողնում: Ազդեցությունը լինում է կոմերցիոն տարածքների, հողամասերի գործարքների վրա, որոնք առավելապես առնչվում են բիզնեսին:

Մամուլի ասուլիսի մյուս մասնակիցը Գործատուների հանրապետական միության նախագահ **Գագիկ Մակարյանն** էր: Նրա կարծիքով, տնտեսության վրա ընտրությունների ազդեցության առումով այս տարվա իրավիճակը տարբերվում է նախորդներից մի քանի առումներով: Ընտրություններին այս անգամ չմասնակցեցին մի քանի կուսակցություններ, չավելացնելով լարվածություն, Հանրապետական կուսակցությունը նույնպես չօգտագործեց օլիգարխիկ եւ խոշոր բիզնեսին ընտրական գործընթացում, ընտրական տեխնոլոգիաները կատարելագործվել են եւ դարձել ավելի կառավարելի: Տնտեսության մեջ անկումներ չեն եղել, ընդհակառակը՝ աճ է եղել, բայց գործազրկությունը պահպանվել է նույն մակարդակի՝ 19,7 տոկոսի վրա: Գագիկ Մակարյանը հիշատակեց նաեւ ԵՄ զեկույցը Հայաստանի մասին, համաձայն որի, գործազրկությունը Հայաստանում կազմում է 18,4 տոկոս, որը Հայաստանի կառավարությունը պարտավորեցրել է իջեցնել մինչեւ 15 տոկոս:

Տես էջ 3

# Կարտոֆիլի ցեցն ու կրճատված ցանքատարածությունները

## *Հրաչ Բերբերյանի հերթական «փորձագիտական» եզրակացությունները*



Հայաստանի ագրարագյուղացիական միավորման նախագահ Հրաչ Բերբերյանը վերջերս հերթական «փորձագիտական» ցնցող եզրակացությունն է արել՝ կայքերից մեկում հայտարարելով, թե կարտոֆիլի ցանքատարածությունները այս տարի կկրճատվեն 50 տոկոսով, իսկ դդմեղինը, լոլիկինն ու սմբուկինը՝ 30 տոկոսով: Ընդ որում, իրեն փորձագետ համարող այս մարդը չի նշել, թե քանի՞ հեկտար են կազմում հիշյալ մշակաբույսերի ցանքատարածությունները, որքանո՞վ են դրանք նվազելու, քանի որ այդ դեպքում նոր հարցեր կառաջանան, որոնց նա հաստատ չէր կարող պատասխանել: Իսկ ցանքատարածությունների նման կրճատման պատճառների մասին նրա հիմնավորումները ոչ այլ ինչ են, քան միտինգային ելույթներ:

Ըստ Հրաչ Բերբերյանի՝ ցանքատարածությունների նման նվազումը պայմանավորված է չինովնիկներով, որոնք չկարողացան խթանել բանջարեղենի արտահանումը Վրաստան եւ արտագաղթով: Հիմա հարց է առաջանում՝ մինչեւ այս տարի չինովնիկները խթանո՞ւմ էին արտահանումը, այս տարի սկսեցին չխթանե՞լ: Կամ մինչեւ այս տարի Հայաստանում արտագաղթ չկար, սպառումն ավելանում էր, իսկ այս տարի արտագաղթն այնքան մեծ է, որ կարտոֆիլի նման մեծ սպառում ունեցող մշակաբույսի ցանքատարածությունները նվազելու են 50 տոկոսո՞վ: Այս մարդը հավանաբար ցանկանում է փոխել իր գործունեության տեսակը, քանի որ որպես փորձագետ, ընդ որում՝ մասնագիտությամբ անասնաբույժ, նրա ասածը ոչ այլ ինչ է, քան անգրագիտություն: Հավանաբար, նա ցանկանում է զբաղվել քաղաքականությամբ եւ իր ելույթի տեղն է շփոթել: Խորհուրդ կտանք, որ նա գտնի այդ տեղը եւ շտապի Ազատության հրապարակի հերթական հանրահավաքին: Այնտեղ շատ չեն խորանա նման «փորձագետների» ասածների մեջ: Ասա՝ ինչ խելքիդ փչում է եւ ի պատասխան կլսես միայն «այո»:

Այդուհանդերձ, Հրաչ Բերբերյանը վերստին հիշել է ցեցը եւ ասել, որ նաեւ դրա պատճառով է նվազել մորմազգիների բերքը: Հիշեցնենք, որ նախկինում եւս ագրարագյուղացիական միավորման նախագահը հայտարարել էր, որ կարտոֆիլի եւ լոլիկի բերքի անկումը պայմանավորված է ցեցով, որ գյուղացիներն իրենց ուժերով չեն կարող պայքարել ցեցի դեմ, պետությունն էլ չի պայքարում, միայն մորեխի դեմ է պայքարում եւ այլն:

Այստեղ հետաքրքրական է Հրաչ Բերբերյանի այն վարկածը, թե որտեղի՞ց է հայտնվել ցեցը Հայաստանում: Նրա կարծիքով՝ Թուրքիայում, Իրանում եւ Վրաստանում այդ ցեցը կա եւ պարտադիր չէ միտումնավոր բերել Հայաստան: «Ցեցը կարող է Արաքսի վրայով էլ թռչել սահմանն անցնել-գալ», եզրակացնում է միավորման նախագահը: Կարող է, իհարկե, ցեցը թռչել նաեւ գետի վրայով, բայց կարող է նաեւ Հայաստան մտնել ներկրված սերմի միջոցով: Ինչո՞ւ է, սակայն, այս տարբերակը բացառում Հրաչ Բերբերյանը եւ առաջ մղում ցեցի՝ Հայաստան մտնելու ավելի անմեղ տարբերակ:

Բանն այն է, որ 1-2 տարի առաջ Արարատյան դաշտի բնակիչները բողոքում էին պոմիդորի սերմից՝ ասելով, որ իրենք այդ սերմը գնեցին Բերբերյանից, բայց բերք չտվեց: Նույնն էին ասում Շիրակի մարզի գյուղացիները դարձյալ «Բերբերյանից առած» կարտոֆիլի սերմի մասին, որը շատ ցածր բերք տվեց: Փաստորեն, առավել հավանական է, որ հենց նրա ներմուծած կարտոֆիլի կամ պոմիդորի սերմերն են վարակված ցեցով, որոնք գնել եւ բերքի կորուստ են ունեցել գյուղացիները: Այլապես ինչո՞ւ սերմեր ներմուծող, իսկ ըստ գյուղացիներից ստացած տեղեկությունների՝ որոշ դեպքերում էլ որպես նվիրատվություն ստացող սերմերը վաճառող հասարակական կազմակերպության նախագահը, այդպես կասկածելիորեն՝ կտրուկ բացառում է ներմուծված սերմի միջոցով ցեցի Հայաստան մտնելը եւ ամեն ինչ գցում նրա՝ «Արաքսի վրայով թռչել գալու» վրա:

Ամեն դեպքում, ակնհայտ է, որ ցեցի դեմ պայքարել պետք է ոչ միայն դեղանյութերով, այլեւ սերմեր ներմուծելիս: Այսինքն, կանխելով արդեն վարակված սերմի ներմուծումը, որպեսզի ներմուծողները հետո չասեն, թե «բացառված է, որ ցեցը ներմուծվող սերմի մեջ կարող է լինել», թե միայն «Արաքսի վրայով թռչելով է եկել Հայաստան» եւ այլն:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՓՈՂՈՑԻՑ

# Ծաղկավաճառը

**Կարաբալան ծաղիկ էր վաճառում Աբովյան փողոցում, այն ժամանակ՝ Աստաֆյան: Կանանց աչքից չէր փախցնում, առիթը բաց չէր թողնում, ծաղիկ էր նվիրում: Նրանք ժպտում ու անցնում էին՝ պահի մեջ երեւի լավ չզգալով:**

**Ասում են, կիսացնցոտիավոր ծաղկավաճառի շուրջը լեգենդ է հյուսված. իրականում հարբեցող է եղել եւ կանանց հետեւից թունդ խոսքեր շպրտել: Չգիտեմ, Աստաֆյան փողոցի ծաղկավաճառը, սակայն, լավ հիշողություն է թողել, այնպես որ տարիներ անց նրա արձանը այս նույն փողոցում կանգնեցրին: Ճիշտ է, տեղից տեղ էր տեղափոխվում, բայց հիմա կարծես հաստատուն է: Ձեռքը առաջ պարզած, թեք կանգնած է նա «Մարկո Պոլո» սրճարանների շարքի հարեւանությամբ՝ ասես օտար մարմին, օտար կերպար-այսօրվա անցորդներից շատ քչերին ծանոթ:**



**Երեւանում ծաղկավաճառ կետերն այսօր անհաշիվ են: Ծաղկավաճառությունն էլ բիզնես է եւ մյուս տեսակների պես իր ներքին ու արտաքին, մութ ու անհայտ օրենքներն ունի: Տոների նախօրեին ծաղկի գները կտրուկ բարձրանում են:**

**Հետաքրքրական մի ռեպորտաժ գնաց Մարտի 8-ի օրը ռուսական հեռուստատեսություններից մեկով: Այդ օրերին ծաղիկներ շատ են բերում եւ դրանք պահպանելն էլ դժվար է: Պարզվում է, որ իրենց գործի «վարպետ» ծաղկավաճառները հիանալի տիրապետում են հին, թոշնած ծաղիկներին նոր կյանք տալու քիմիաթերապիայի տարբեր ձեւերին՝ կարճ ժամանակով, իհարկե:**

**Երեւանի «Բարեկամություն» մետրոյի խաչվող փողոցներում առնվազն 5-6 ծաղկավաճառ կետ կա: Նույնն են բոլորը, գները նույնն են, ծաղիկները նույնն են, բայց այ, վաճառողները, նրանց վերաբերմունքը նույնը չեն՝ անտարբեր-տարբեր, ուշադիր-անուշադիր, հասկացող-չհասկացող: Կիեւյան փողոցի սկզբնամասին հարող հատվածում, ծածկի տակ արդեն քանի տարի միջին տարիքի, բարեհամբույր մի կին ծաղիկ է վաճառում: Իր հանգստության մեջ գրավչություն կա, մի քիչ կոշտացած, կարծես արեւահարված դիմագծերը հայացքի բարության մեջ մեղմանում-քնքշանում են, ձայնը փափուկ է: Գերադասում եմ ծաղիկներ իրենից վերցնել, հաճելի, թեթեւ է դարձնում առեւտուրը, առաջարկում է լավագույնները, հաճախ զիջում է, այնպես որ՝ ստիպված ես լինում նույնիսկ հրաժարվել: Ասում եմ՝ չէ, տուժում եք այդպես, ուրիշից կվերցնեմ: Ինքը թե՝ ինչ տեսակ մարդ ես, տար, մնացածն էլ (տխրության օր էր)՝ իմ անցավորների հիշատակին»:**

**Հայացքում թախիծ կա նստած, բայց ժպտում է: Ինքն էլ մյուսների պես ամեն օր նույն բանն է անում, ծաղիկ է վաճառում, սակայն սովորական չի դառնում: Իրենից վերցրած ծաղիկները ձեռքիս մեջ մի ուրիշ զգացողություն են առաջացնում, քիչ առաջ ասված բառերը մեջն են, թախիծը մեջն է, ուրախությունը մեջն է:**

**Մի այլ տեղ՝ Հակոբյան փողոցի եզրամասում դարձյալ ծաղկավաճառ կա. տղամարդ է՝ անհայացք ու անհամ: Իր համար բոլոր ծաղիկները մեկ են, հաճախորդները մեկ են, գույնը մեկ է, բույրը մեկ է: Չի սիրում, երբ փորձում ես ընտրել: Ինքը ոչինչ չի առաջարկում, անհամբեր սպասում է: Վերցնում ես մի փունջ՝ տերեւները թափված կամ դեղնած են, ասում ես՝ փոխի–դեմքի արտահայտությունից քիչ է մնում մեռնես: Ձանձրույթով ծաղկի գլխից հոգնած քաշում, դուրս է հանում, հետո, երբ չես հավանում, ստիպված տեղն է դնում: Ձեռքի ինչպիսի շարժում՝ ավելի շուտ շպրտում է: «Կողքի կանաչի վաճառողը ավելի խնամքով է վարվում», ասում եմ: Դժկամությամբ, բառերն ալարելով արտաբերում է. «Դե որ ամեն մեկը քո պես ջոկի»: Այսինքն՝ թառամած փունջը սուսուփուս վերցնե՞ս ու գնա՞ս: Ուզում ես արագ հեռանալ:**

**Խեղճ ծաղիկներ, ի՞նչ իմանաք, թե ինչ ճակատագիր է ձեզ սպասում:**

**Մ. Բ.**

# Միջոցառում Ազգային գրադարանում՝ նվիրված Փրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի 80-ամյակին

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը եւ ՀՀ Ազգային գրադարանը կազմակերպում են ցուցադրություն՝ նվիրված Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հռչակավոր վեպի առաջին հրատարակության ութսունամյակին:

«Մուսա լեռան քառասուն օրը» պատմավեպը, որը նկարագրում է Մեծ Եղեռնի տարիներին կիլիկիահայության գոյամարտի հերոսական դրվագներից մեկը, որի արդյունքում եւ ֆրանսիական ռազմանավերի շնորհիվ վերահաս բնաջնջումից հրաշքով փրկվեց ավելի քան չորս հազար մարդ, իրավամբ համարվում է կոթողային մի ստեղծագործություն, որի բովանդակությունը մեկ գեղարվեստական ստեղծագործության սահմաններում լիարժեքորեն ներկայացնում է Հայոց ցեղասպանության սարսափներն ու ինքնապաշտպանության համար մղված պայքարը:

Ազգային գրադարանում ներկայացված ցուցադրության մեջ ներառվել են պատմավեպի տարբեր տարիներին եւ տարբեր լեզուներով լույս տեսած ավելի քան հիսուն հրատարակություններ, որոնք Ազգային գրադարանի եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածուների մասն են կազմում:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն այս առիթով «Երախտագիտություն» շարքով թողարկել է «Ֆրանց Վերֆել» ոսկե հուշամեդալ:

Բացումը՝ ապրիլի 17-ին, ժամը՝ 12:00-ին:

Վայրը՝ Ազգային գրադարանի կենտրոնական մասնաշենքի սրահ:

Մուտքն ազատ է:

**Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ**
**ՀՀ Ազգային գրադարան**

# Ցուցարարները չեն ուզում, ոստիկանները չեն կարող

*1-ին էջից*

Ցուցարարները կցանկանա՞ն արդյոք հարձակվել եւ ոստիկանները կկարողանա՞ն արդյոք հարվածել, ծեծել: Չէ՞ որ ի վերջո ոստիկաններին պետք է, որ ցուցարարները չհարձակվեն, իսկ վերջիններիս՝ որ ոստիկանները չհարվածեն, չծեծեն:

Երեկ ոստիկանության տոնն էր, ու հնչած շնորհավորանքներին միացել է նաեւ ապրիլի 9-ին հրապարակի՝ «ժողովրդի մասում» կանգնած Ռուբեն Հակոբյանը. «Իհարկե շնորհավորում եմ մեր ոստիկանների տոնը: Ու ցանկանում եմ, որ Հայաստանի քաղաքացին փողոցում ոստիկան տեսնելիս ոչ թե վախենա, այլ զգա, որ իր կողքին կանգնած է օրենքի պաշտպանը», ասել է «Ժառանգության» փոխնախագահը:

Լավ կլինի, որ մեր երկրում փոփոխությունները միմյանցից կախված չլինեն, ասենք, ոստիկանության լավ լինելը պայմանավորված չլինի ընդդիմության լավ լինելով ու հակառակը: Յուրաքանչյուր ոլորտ իր ներսում փոխվի, հակառակ պարագայում, միմյանցով պայմանավորելով, իրար սպասելով, երկրում ոչինչ չի փոխվելու, անգամ կադրային փոփոխություններից հետո:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Մեզանում էկոկրթությունը դեռեւս արդյունք չի տալիս

Երբ 2001-ի դեկտեմբերի 17-ին ընդունվեց «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության եւ դաստիարակության մասին» ՀՀ օրենքը, նրա 4-րդ հոդվածն ամբողջովին նվիրված էր կրթական համակարգի բոլոր մակարդակներում էկոլոգիական կրթության պարտադիր լինելուն: Օրենքի ընդունումից անցել է 12 տարի, սակայն չենք կարող փաստել, թե այսօր մեր երկրում պակասել են անթույլատրելի ծառահատումները, անօրինական շինությունների ի հայտ գալը, կանաչ գոտիների հաշվին սրճարանների կառուցապատումը եւ հազար ու մի էկոլոգիական նշանակության խնդիրներ: Երեւի սրա հիմնական պատճառներից մեկը հենց այն է, որ սույն օրենքը խախտող մարդիկ համապատասխան էկոլոգիական կրթություն ժամանակին չեն ստացել: Եվ այս բնապահպանական տարրական դաստիարակության պակասը լրացնելու համար է, որ այսօր հանրակրթական դպրոցներում, սկսած ցածր դասարաններից, աշակերտներն առնչվում են էկոլոգիա եւ բնապահպանություն հասկացություններին:

Կրթության ազգային ինստիտուտի աշխատակից **Լուսինե Ալեքսանյանի** խոսքերով՝ աշակերտը էկոլոգիային ծանոթանում է 2-րդ դասարանից. ««Ես եւ շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում երեխաները բնապահպանության, շրջակա միջավայրի պահպանության մասին որոշակի տեղեկատվություն ստանում են: Կարելի է ասել, որ այս գիտելիքները լիովին բավարար են, որ աշակերտները 2-րդ դասարանից պատկերացում ունենան էկոլոգիայի, նրա կարեւորության մասին»: Այս առարկան դասավանդվում է մինչեւ 4-րդ դասարան. «Դրանից հետո դպրոցականները էկոլոգիային հաղորդակից են լինում արդեն «Բնագիտություն», ավելի բարձր դասարաններում՝ «Կենսաբանություն» առարկաների շրջանակներում: Բացի սրանից՝ 8-րդ եւ 9-րդ դասարանների համար կա հատուկ ծրագրով գրված դասագիրք, որը կոչվում է հենց «Բնապահպանություն»: Սակայն այս առարկան ոչ թե պարտադիր է, այլ երաշխավորված առարկաների ցանկին է դասվում: Ասել է թե՝ առարկայի դասավանդումը դպրոցում կախված է միմիայն համապատասխան դպրոցի տնօրենության ցանկությունից»:

Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոցի տնօրեն **Համլիկ Ղարիբյանը** նշում է, որ իրենց դպրոցը հաճախակի է մասնակցում էկոլոգիական ակցիաների. «Կարող եմ վստահաբար ասել, որ մեր դպրոցում կոնկրետ բնության պահպանությանը մեծ տեղ ենք հատկացնում, պատահական չէ, որ դպրոցի բակում ունենք մի փոքրիկ կանաչապատ պարտեզ: Արդեն մի քանի տարի շարունակ մենք բնապահպանական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցում ենք. երեխաները գնում են տնկարաններ, ծառ են տնկում, արդեն իսկ օգտագործված թղթերի մակուլատուրա են հավաքում, որպեսզի խնայեն ծառահատումից առաջացող թղթի ծավալները»:

Դպրոցի հետ համագործակցող մի հասարակական կառույց էլ ««Հայկական Փի Ար ասոցիացիա» գիտատեղեկատվական ՀԿ»-ն է , որը բազմիցս էկոլոգիական նշանակության ակցիաներ է իրականացրել դպրոցների տարածքներում: Ասոցիացիայի նախագահ **Աստղիկ Ավետիսյանը** նշում է. «Բնություն-մարդ շփումը տարեցտարի պակասում է: Եվ մարդկանց կողմից բնության աղտոտումը հղի է վտանգավոր հետեւանքներով: Կարեւորելով այս խնդիրը՝ «Հայկական Փի Ար ասոցիացիա» գիտատեղեկատվական ՀԿ»-ն եւ «Երիտասարդական ակումբների դաշնությունը» պարբերաբար իրականացնում են բնապահպանական ուսուցողական եւ քարոզարշավային ծրագրեր: Դպրոցականներն ու երիտասարդները սիրով են մասնակցում, եւ շատ կարեւոր է, որ յուրաքանչյուր ակցիայից հետո այդ աշակերտների թիվը մեծանում է»:




Բնապահպան **Կարինե Դանիելյանը**, սակայն, էկոկրթության հետ կապված իր մտահոգություններն է առաջ քաշում. «Մի քանի տարի առաջ, երբ քննարկվում էր, թե դպրոցն ի՞նչ մակարդակով պետք է ուսումնասիրի էկոլոգիա գիտությունն առհասարակ, ես հայտնեցի իմ տեսակետը: Այն էր՝ տարական օղակում պետք է անցկացնել էկոկրթության տարալուծված մոդելը, այսինքն՝ էկոկրթությանը ծանոթանալ տարբեր առարկաների շրջանակներում: Բայց սա միայն բավարար չէ, քանի որ չի ապահովվում էկոլոգիայի գիտական մասի ուսուցանումը: Ու կարծում եմ, որ հենց «էկոլոգիա» առարկայի պարտադիր ներմուծումը դպրոց, շատ ավելի տեղին ու ճիշտ կլինի»: Տիկին Դանիելյանը նաեւ մեկ այլ փաստ է առաջ քաշում. «Մանկավարժական համալսարանը պատրաստում է հենց էկոլոգ-մանկավարժների, բայց հարց է, թե որտե՞ղ են նրանք աշխատելու, եթե դպրոցում նմանատիպ առարկա պարտադիր ուսուցմամբ չի դասավանդվում»:

Ստացվում է, որ դպրոցներում այսօր էկոլոգիա գիտությանը աշակերտները որոշակիորեն առնչվում են, բայց դրանից էկոլոգիական նշանակության հիմնախնդիրները մեզանում չեն պակասում:

Հարկ է նշել, որ երբ Ն. Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոցում էինք, դպրոցի բակում տնկելու համար ծառերի տնկիներ ու թփեր բերեցին: Կարելի էր վստահաբար ասել, որ այս դպրոցում, իրոք, էկոլոգիա հասկացությանն ու էկոլոգիական ոգով աշակերտին դաստիարակելուն մեծ տեղ են հատկացնում. դպրոցի բակում առկա փոքրիկ պարտեզի ծաղիկներից մեկն անգամ կոտրված չէր, ծառերը ճղակոտոր չէին, կոնֆետի փոքրիկ թղթերը թափված չէին դպրոցի բակում: Սակայն սա միայն մեկ դպրոցի օրինակով, ինչը, վստահաբար, չի կարելի ասել հանրապետության բոլոր դպրոցների մասին:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# Մայրաքաղաքի էկոլոգիական խնդիրներն ու Երեւանի ավագանին

Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագրում որպես բնապահպանական խնդիր առանձնացված է աղբահանությունը: ԲՀԿ-ականները խնդրի լուծման առավել արդյունավետ միջոց համարում են աղբավերամշակման գործարանի կառուցումն ու շահագործումը:

ԲՀԿ ավագանու ցուցակում ընդգրկված **Գուրգեն Գասպարյանի** գնահատմամբ՝ պետք է կառուցվի մեկ ընդհանուր տեղ՝ աղբավերամշակման գործարան, եւ դրանով կարելի է խնդիրը լուծված համարել:

Որ Երեւանին աղբավերամշակման գործարան է հարկավոր՝ փաստում է նաեւ «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ-ի նախագահ **Կարինե Դանիելյանը**՝ հավելելով, որ նման գործարաններ գործում են աշխարհի բազմաթիվ մայրաքաղաքներում եւ իսկական օգուտ են տալիս շրջակա միջավայրին:

ՕԵԿ ներկայացուցիչ **Հրայր Մարգարյանն** էլ առաջնային է համարում քաղաքի գլխավոր հատակագծի խնդիրը: ՕԵԿ-ական թեկնածուն ուշադրության է հրավիրում շինթույլտվության գործընթացին, որը պետք է լինի օրենքի սահմաններում: Պետք է աշխատի բնապահպանական փորձաքննություն անցկացնող ինստիտուտը:

«Բարեւ, Երեւան» դաշինքի ներկայացուցիչ Սուսաննա Մուրադյանը համամիտ է, որ խախտված է մայրաքաղաքի գլխավոր հատակագիծը: Նա շեշտում է, որ նախ պետք է քաղաքացուն վերադարձվեն կանաչ տարածքները: Այսօր մեկ քաղաքացուն բաժին ընկնող կանաչ գոտին երկու անգամ զիջում է սահմանված նորմերին: Մայրաքաղաքում ընդունվել են բազմաթիվ ապօրինի որոշումներ, որոնց միջոցով կանաչ տարածքների փոխարեն այսօր բետոնապատ կառույցներ են:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցությունից **Եվա Թովմասյանն** ուշադրության է հրավիրում մայրաքաղաքում օդի աղտոտվածությանը: Այս ամենը կանաչ տարածքների քչացման հետեւանքն է:

«Կանաչ տարածքների փոխարեն այժմ բարձրահարկ շինություններ են: Եկեք չմոռանանք Հրազդանի կիրճը, որը վերածվել է ռեստորանների շքերթի: Դրանց մեծ մասը ապօրինի շինություններ են»:

Որ մայրաքաղաքում բազմաթիվ են ապօրինի շինությունները՝ հաստատում են նաեւ Դաշնակցությունում: ՀՅԴ-ն պայքարելու է առաջին հերթին ապօրինի շինությունների դեմ: Հետո արդեն կմտածեն կանաչապատման, շինությունների ամրացման եւ այլ հարցերի մասին, սակայն նախ պետք է օրենք հաստատել մայրաքաղաքում:

Հ. Հ.

# «Նորակառույց բնակարանների պահանջարկն ավելի մեծ է, բայց նորակառույցների պահանջարկը բացակայում է»

*1-ին էջից*

Կառավարության դրական քայլերից Գործատուների միության նախագահին առանձնացրեց ավելի կառուցվածքային աշխատանքը հարկային վարչարարության, ստուգումների հետ կապված, 11 ճյուղերի առանձնացումը եւ նրանց աջակցության ծրագրերի իրականացումը, առանձին ձեռնարկությունների խթանումը, եթե դրանք դիմում եւ զարգացման առաջարկ են ներկայացնում:

Թերություններն այն են, որ խոշոր եւ միկրո բիզնեսը բեւեռացված են, միջին խավը չի հասցնում կայանալ նաեւ տարբեր հարկային փոփոխությունների պատճառով: «Պետք է միկրոբիզնեսին ազատականացնել, որ զարգանա, եւ դրանով լուծի նաեւ զբաղվածության խնդիրը», նշեց Գագիկ Մակարյանը: Որպես բիզնեսի համար աննպաստ հարկային փոփոխությունների օրինակ նա բերեց ստոմատոլոգների օրինակը, որը պետական բյուջե լրացուցիչ 6 մլն դրամ բերեց: Այդ գումարը, ըստ Գագիկ Մակարյանի, կարելի էր ստանալ ավելի խոշոր բիզնեսից: Նրա կարծիքով, փոքր բիզնեսից ստացվող 100 մլն դոլար հարկերը նույնպես կարելի է հավաքել խոշոր բիզնեսից եւ թույլ տալ, որ փոքր բիզնեսը զարգանա:

«Ակցեռն» անշարժ գույքի գործակալության տնօրեն Հակոբ Բաղդասարյանը նշեց, որ անշարժ գույքի շուկան առաջինն է զգում ընդհանուր տնտեսության վատթարացումը եւ վերջինը՝ տնտեսության վիճակի բարելավումը: Այսինքն, դեռ այդ բարելավումը անշարժ գույքի շուկային չի հասել: Հակոբ Բաղդասարյանը ծիծաղելի համարեց հիփոթեքային վարկերի քանակը, որը տարեկան տատանվում է 500-2000-ի սահմաններում: Մինչդեռ այդ ցուցանիշը կարելի է տասնյակ անգամներով ավելացնել: Անշարժ գույքի գործակալության տնօրենի կարծիքով, այս իրավիճակի պատճառը բանկերի խիստ մոտեցումներն են հիփոթեքային վարկեր տրամադրելիս: «Այն դեպքում երբ հիփոթեքային վարկ տրամադրելիս պահանջվում է 30 տոկոս կանխավճար, ռիսկը բանկի համար գրեթե զրոյական է դառնում, հետեւաբար խիստ պահանջներ կարելի է դնել միայն առանց կանխավճարի վարկերի տրամադրման դեպքում», ասաց Հակոբ Բաղդասարյանը, անհրաժեշտ համարելով, որ պետությունը որոշակիորեն ազդի այս իրավիճակի վրա՝ իր վրա վերցնելով հիփոթեքային վարկերի որոշակի ռիսկեր կամ սուբսիդավորելով վարկերի տոկոսների մի մասը:

Խոսելով անշարժ գույքի շուկայում ներկայումս ձեւավորված իրավիճակի մասին՝ «Ակցեռնի» տնօրենն ասաց, որ շուկայում գնային փոփոխություններ չկան, Հայաստան մտնող դրամական փոխանցումների որոշակի մասը մտնում է նաեւ անշարժ գույքի շուկա եւ շուկայի վիճակը կարելի է համարել «կայուն կանգնած»: Նրա հավաստիացմամբ, իրավիճակի վրա չի ազդել նաեւ սիրիահայերի հոսքը Հայաստան, քանի որ նրանց թիվը մեծ չէ՝ 5-6 հազար մարդ, եւ մեծ մասը սպասողական վիճակի մեջ է:

«**Ազգի**» հարցին, թե ի՞նչ զարգացումներ են հնարավոր ապագայում այս ոլորտում, Հակոբ Բաղդասարյանը պատասխանեց, որ հաջողությունը կապված է մենեջմենտի հետ՝ ժամանակն է փոխելու մենեջմենտը եւ անցնելու երկարատեւ լուծումների, հրաժարվելով այս պահին 1 մլն դրամ բերող լուծումներից: Մեր մյուս հարցն այն էր, թե ինչպե՞ս է գործակալության տնօրենը գնահատում անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հրապարակած շուկայական միջին գների վերլուծության մեջ գների փոքր աճի ցուցանիշը: Հակոբ Բաղդասարյանը պատասխանեց, որ դա կապված է մեթոդաբանության հետ, քանի որ կադաստրի հրապարակած տվյալների մեջ փոխարժեքի փոփոխությունները հաշվի չեն առնվում եւ հրապարակված գների աճը իրականում կարող է չլինել կամ անգամ գների անկում լինել:

Մեր վերջին հարցը՝ ուղղված Հակոբ Բաղդասարյանին, այն էր, թե ինչպե՞ս է նա մոտենում երկու հակադիր տեսակետներին նորակառույց բնակարանների վերաբերյալ, համաձայն մեկի՝ նորակառույց բնակարաններն ավելի մեծ պահանջարկ ունեն, իսկ մյուսի՝ նորակառույց բնակարանների մեծ մասը դատարկ են: «Ակցեռնի» տնօրենը յուրօրինակ պատասխան տվեց, ասելով, որ երկու տեսակետն էլ ճիշտ են՝ «նորակառույցների պահանջարկն ավելի մեծ է, բայց նորակառույցների պահանջարկը բացակայում է»:

## Հետաքննություն

# Թամեռլան Գարաեւի 20-ամյա ազատ աքսորն ու չմարած պարտքը

Իրականությունը երեւի ամբողջությամբ պատմություն չի դառնում: Ինչ-որ բան դուրս է մնում: Երբեմն էլ՝ կեղծվում: Բայց երբ խեղաթյուրվում է լիովին, պարտավոր ենք բարձրաձայնել: Խոջալուի մասին մեր հրապարակումները գուցե ձանձրալի թվան: Մենք այս դեպքում ոչ բարձր ոճի, ոչ էլ, մանավանդ, «բացառիկ նյութի տիրապետելու» տպավորության հավակնություն չունենք: Պարզապես ադրբեջանական աղբյուրներից, ընդգծենք՝ բաց, բոլորին հասանելի, քաղում ենք հարկավոր փաստեր, համադրում: Որպեսզի ինչ-որ չափով վերականգնենք ճշմարտությունը: Հերթական «հերոս»-ը Թամեռլան Գարաեւն է, որ Խոջալուի դեպքերի դրությամբ եղել է Ադրբեջանի ԳԽ նախագահի տեղակալ, գտնվել Աղդամում:

Իրադարձությունների ամենաթարմ հետքերով Ադրբեջանի դատախազությունը քրգործ հարուցել է 1992թ. փետրվարի 27-ին: Դատաբժշկական փորձաքննություն նշանակվել է 184 դիակի եւ 229 վիրավորի փաստերով: Իբրեւ տուժած հարցաքննվել է 200, որպես վկա՝ 300 անձ (տես՝http://www.erevangala500.com/booke//pdf/1323994124.pdf):

Վկաներից մեկն էլ Թամեռլան Գարաեւն էր: Նա հարցաքննվել է 1992 թ. սեպտեմբերի 14-ին, երբ արդեն ԳԽ նախագահի առաջին տեղակալ էր. Ադրբեջանում իշխանության էր եկել Ժողովրդական ճակատը: Գարաեւին հարցաքննել է դատախազության հատուկ կարեւոր գործերով քննիչ Ս. Ռաջաբովը, հարցաքննության արձանագրությունը կազմված է ձեռագիր, ադրբեջաներեն է (այս եւ հետագա հղումները՝ նույն տեղում):

Վկայի ինքնությունը ճշտելուց հետո քննիչը նրան հարց է ուղղել, թե «ո՞ւմ հանձնարարությամբ է 23.02.92-ին մեկնել Աղդամ»: Գարաեւը պատասխանել է, որ լինելով ԳԽ նախագահի տեղակալ, ինքը նման հանձնարարություն կարող էր ստանալ «կամ Գերագույն խորհրդից, կամ ԳԽ Ազգային խորհրդից (բնագրում՝ «Միլլի շուրա»- Վ. Ա.) կամ ԳԽ նախագահից», որոնք, սակայն, իրեն «նման հանձնարարություն չեն տվել»: Նա, այսպիսով, փաստել է, որ Աղդամում գտնվելու եւ ինչ-որ հարցեր քննարկելու, առավել եւս՝ դրանց լուծումներ տալու կամ առաջարկություններ անելու պաշտոնական լիազորություն չի ունեցել: Միայն «նախագահ Մութալիբովին տեղեկացրել է», որ մտադիր է գնալ Աղդամ, «հանդիպել մարդկանց, նրանց ներկայացնել արտակարգ դրության հրամանագիրը, բացատրել իրավիճակը»:

Գարաեւը չի կարողացել հիշել, թե երբ է ներկա գտնվել Մութալիբովի մոտ խորհրդակցության, որի ավարտին «նա իրեն խնդրած լինի մնալ»: Քննիչը պարզաբանել է, որ նման ցուցմունք տվել է Արազ Ալիզադեն (Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայիս նախագահը): «Ալիզադեն, հնարավոր է, անձնական նկատառումներից ելնելով խառնում է փաստերը»,- խուսափողական ասել է ԳԽ նախագահի առաջին տեղակալը, որից հետո քննիչն անցել է բուն հարցադրումներին:

Դրանց լիարժեք վերծանությունը ժամանակ եւ մասնագիտական բարձր մակարդակ է պահանջում: Մենք հասցրել ենք առանձնացնել հետեւյալը: Քննիչին հետաքրքրել է՝ «օրակարգում եղե՞լ է Խոջալուի բնակչությանը տարհանելու հարց, ուղղաթիռներ եղե՞լ են, որպեսզի մարդկանց դուրս բերեին»: Գարաեւը նախ տվել է «քաղաքական» գնահատական: Ըստ այդմ, «նման լարված իրավիճակում պատասխանատու անձանցից եւ ոչ մեկը համարձակություն չի ունեցել դնելու մարդկանց տեղափոխելու հարց»: Այնուհետեւ նա ասել է, որ «Խոջալուի դեպքերից 5-6 օր առաջ մինչ այդ Շահին Մուսաեւի (Ադրբեջանի ՊՆ գլխավոր շտաբի պետ, նախարարի պաշտոնակատար) գլխավորությամբ ամեն օր Ղարաբաղ թռչող զրահապատ (՞- Վ. Ա.) ուղղաթիռների թռիչքները հանկարծակի դադարեցվել են»: Այնուհետեւ Գարաեւը, որ մինչ այդ իրեն «զինվորական գործերին երբեւէ չառնչված մարդու» էր ներկայացրել, պատմել է, որ «անձամբ Խոջալուի դատախազ Աթաքիշիի (Աթաքիշի Աթաքիշիեւի) միջոցով մի «ԿամԱԶ» բեռ է ուղարկել Գյանջա, որպեսզի գոնե մի քանի թռիչք անեն (ռուս օդաչուները)»:

Մինչ Գարաեւի ցուցմունքների հետագա ընթացքին անդրադառնալը միջանկյալ ասենք, որ «դատախազ» Աթաքիշիեւին Գյանջա գործուղելու փաստը վկայում է, որ դեպքերի օրը վերջինս Խոջալուում չի գտնվել: Դա, սակայն, չի խանգարել, որ Աթաքիշիեւը փետրվարի 27-ին Աղդամում հարցազրույց տա Չինգիզ Մուստաֆաեւին՝ ներկայանալով իբրեւ «տուժած ականատես»:

Այժմ՝ Գարաեւի վկայության քաղաքական ենթատեքստի մասին: Խոսելով Գյանջայի զինվորականներից ստացած մերժման մասին, նա հռետորական հարց է տալիս. «Ասենք թե դա Ադրբեջանին քիթխփոցի էր, կենտրոնից (Մոսկվայից- Վ. Ա.) հրահանգված, որպեսզի (Ադրբեջանը) շուտափույթ վավերացնի ԱՊՀ պայմանագիրը (Մութալիբովն այդ պայմանագիրն ստորագրել էր, բայց ԳԽ-ն չէր վավերացնում- Վ. Ա.), իսկ ինչո՞ւ մեր (Ադրբեջանին պատկանող) զրահապատ ուղղաթիռները չէին կարող Խոջալու թռչել, չէ՞ որ Շահին Մուսաեւն ասել էր, որ Խոջալուի շուրջը հայերի բոլոր հենակետերը ոչնչացված են»:

Ինչպես տեսնում ենք, Գարաեւը քննադատության սլաքն ուղղում է պաշտպանության նախարարի պաշտոնակատար Շահին Մուսաեւի, իրականում՝ Այազ Մութալիբովի դեմ: Բնութագրական է նաեւ, որ քննիչը նրա «քաղաքական զեղումները» չի ընդհատել, չի փորձել բերել հստակության դաշտ: Ակնհայտ է, որ փոփոխված իրավիճակում կողմերին հարմար էր կատարվածի համար պատասխանատվությունը բարդել Մութալիբովի եւ նրա կառավարության առանձին անդամների ուսերին:

Քննիչ Ռաջաբովին հետաքրքրել է Գարաեւի բացատրությունը Ֆահմին Հաջիեւի (Աղդամում Ադրբեջանի ՊՆ հատուկ ներկայացուցչի, ՆԳՆ ներքին զորքերի հրամանատարի) այն ցուցմունքի վերաբերյալ, ըստ որի Հաջիեւը 24.02.92-ին զանգել է Շահին Մուսաեւին եւ իմացել, որ Գարաեւը նախագահ Մութալիբովից պահանջել է «հետ վերցնել Հաջիեւի լիազորությունները»: ԳԽ նախագահի առաջին տեղակալը նախ ժխտել է, թե որեւէ մեկի հետ քննարկած լինի Ֆահմին Հաջիեւին լիազորություններից զրկելու հարցը, ապա քիչ անց ասել. «Բայց լիազորությունները դադարեցնելու մասին խնդրանքը դեռեւս չի նշանակում լիազորություններից զրկել», ինչից պարզ հասկացվում է, որ նա իրոք Մութալիբովի առջեւ նման հարց հարուցել է:

Փետրվարի 24-ին Ֆահմին Հաջիեւը եւ ՊՆ-ից լրացուցիչ Աղդամ գործուղված երկու սպա հրավիրել են զորախմբերի հրամանատարների խորհրդակցություն եւ ներկայացրել «Ասկերանի ուղղությամբ ճեղքմամբ Խոջալուն ապաշրջափակելու» ռազմագործողության օպերատիվ պլանը: Խորհրդակցության կազմակերպիչ սպաներից մեկի՝ փոխգնդապետ Ինթիգամ Աբդուլլաեւի ցուցմունքներով՝ երբ առաջարկվել է, որպեսզի ռազմագործողություն սկսելու հրամանը ստորագրվի, Ֆահմին Հաջիեւն ասել է, որ ինքը նման լիազորություն «այլեւս չունի»: Հաջորդ օրը նշանակված ժամին զորախմբերի հրամանատարներից ոչ ոք չի ներկայացել, ռազմագործողությունը տապալվել է: Կա՞պ ունի դա Գարաեւի կողմից Մութալիբովի առջեւ Հաջիեւին լիազորություններից զրկելու հարց հարուցելու հետ՝ մնում է ենթադրել:

Այս իմաստով չափազանց կարեւոր է, որ «ինչպիսի՞ն էր իրավիճակն Աղդամում փետրվարի 25-ին» հարցին պատասխանելիս Գարաեւը հիշել է, որ հրամանատարներից երկուսը՝ Ռովշան Ջավադովը եւ Ֆաիկ Բախշալիեւը, «եկել եւ ասել են, որ Ֆահմինի օպերացիայից բան դուրս չեկավ»: Նրանք տեղեկացրել են, որ իրենք «մի օպերացիա են համաձայնեցրել, գուցե հնարավոր լինի դեպի Խոջալու ճանապարհ բացել եւ օգնություն հասցնել»: Գարաեւի խոսքերով, «նրանք դուրս են եկել (Աղդամից շարժվել են) նույն օրվա (փետրվարի 25-ի) երեկոյան կողմ, մինչեւ առավոտ (փետրվարի 26-ի) նրանցից տեղեկություն չի եղել»: Գարաեւը շարունակել է. «Առավոտյան կողմ նրանցից լուր եկավ, որ ոչինչ անել չի ստացվել, միայն շրջակա գյուղերի (Աղդամի) ջոկատների ուժերով գրավել են Գարագայա տեղանքը եւ Խոջալուից եկող մարդկանց համար Աղդամ հասնելու հնարավորություն ստեղծել»:

«Գարագայա» տեղանքը Աղդամի փաստացի արվարձան Շելլի գյուղի տարածքում էր: Ջավադովը եւ Բախշալիեւն այն «գրավելու» խնդիր չունեին: Հակառակ դեպքում պիտի ընդունել, որ Խոջալուի ռազմագործողությանը նախորդած ժամերին հայկական ուժերը գտնվել են գրեթե Աղդամի մատույցներում, ինչը ոչ միայն անհավանական է, այլեւ որեւէ, այդ թվում՝ ադրբեջանական, աղբյուրի կողմից վկայված չէ: Եվ եթե «Ֆահմինի օպերացիայից բան դուրս չէր եկել», այն տապալվել էր, ապա ինչի՞ վրա էին հույս դրել Ջավադովը եւ Բախշալիեւը, երբ «համաձայնեցրել էին (ո՞ւմ հետ) իրենց ծրագիրը» եւ փորձ էին արել «դեպի Խոջալու ճանապարհ բացել, օգնություն հասցնել»: Վերջապես, Թամեռլան Գարաեւը փաստորեն վկայել է, որ տեղյակ էր Ջավադովի եւ Բախշալիեւի ծրագրին, սպասել է նրանցից լուրերի եւ արդեն փետրվարի 26-ի «առավոտյան կողմ» իմացել, որ նրանք «գրավել են Գարագայա տեղանքը», այնտեղ «դիմավորել» Խոջալուից տեղ հասած մարդկանց:

Ցուցմունքի վերջում Գարաեւը, առանց քննիչի կողմից հարցի առաջադրման, ավելացրել է, որ «փետրվարի 27-ին Աղդամ պիտի գար, որպեսզի Խանքենդի (Ստեփանակերտ) եւ Շուշի գնա Իրանի արտգործնախարար Վելայաթին, ձեռք էր բերվել եռօրյա հրադադարի համաձայնություն»: Նրա ասելով, Վելայաթին թռել էր Գյանջա, որտեղից «պիտի գար ուղղաթիռով, սակայն զինվորականները հրաժարվել էին ուղղաթիռ տրամադրել, Վելայաթին ասել էր, որ համաձայն է մեկնել ավտոմեքենայով»: Գարաեւը հիշել է, որ «օգտվելով մի քանի ժամվա հնարավորությունից (մինչեւ իրանցի դիվանագետը Գյանջայից ավտոմեքենայով Աղդամ կհասներ), գնացել է Շելլի՝ մասնակցելու խոջալուցիներին «ազատելու» (չակերտները մերն են- Վ. Ա.) ժամանակ զոհված հարազատների հուղարկավորությանը եւ տեսել, որ գերեզմանատան մոտ «Գրադ» մեքենայից (բնագրում այդպես է-Վ. Ա.) կրակում են Նախիջեւանիկի ուղղությամբ»:

Թամեռլան Գարաեւի վկայությամբ՝ երբ փոխգնդապետ Նեչուպուրենկոյին հարցրել է, թե «ինչո՞ւ են աննպատակ կրակ բացել, վերջինս ասել է. «Եթե զենքը կա, պիտի կրակի», եւ դա տեւել է մեկուկես-երկու ժամ»: Վերադառնալով Աղդամ՝ Գարաեւը տեղեկացել է, որ Վելայաթին հրաժարվել է ուղեւորությունից, իսկ երբ զանգել է Գյանջա՝ իմանալու պատճառը, այնտեղից ասել են, որ Վելայաթիին զգուշացրել են, որ Թամեռլան Գարաեւը «Գրադ»-ը տարել է իր հայրենի գյուղ եւ կրակում է հայերի վրա»:

Այստեղ էական է երկու հանգամանք: Նախ՝ Գարաեւը վկայում է, որ Շելլիից «Գրադ» կայանքով հրթիռակոծվել է Նախիջեւանիկի ուղղությունը: Այն էլ՝ շուրջ երկու ժամ անընդմեջ: Փաստորեն նա հաստատել է, որ ադրբեջանական կողմից զանգվածային ոչնչացման զենք է կիրառվել հայկական խաղաղ բնակավայրերի դեմ: Երկրորդ՝ նա հավաստել է, որ դա արվել է հրադադարի համաձայնությունը խախտելու եւ Վելայաթիի այցը տապալելու նպատակով: Այսինքն, ադրբեջանական կողմը չի ցանկացել, որ Իրանի արտգործնախարարը Խոջալուի դեպքերի հաջորդ օրը լինի Աղդամում, այցելի Ստեփանակերտ: Ինչո՞ւ: Տրամաբանականն այն է, որ Ադրբեջանում պետք է խիստ շահագրգռված լինեին, որ Խոջալուի «կոտորածն» ստանար հզոր արձագանք, ինչպես եւ դառնար միջազգային հետաքննության առարկա: Դա կարող էր սկսվել Վելայաթիի այցելությամբ, ինչը, Թամեռլան Գարաեւի վկայությամբ, տեղի չի ունեցել «անհայտ անձանց» մեղքով: Մինչդեռ ուրիշները հենց նրան են մեղադրել դրանում, ինչպես եւ ասել է ինքը: Եզրակացության իրավունքը թողնենք ընթերցողին:

Եվ՝ վերջին շտրիխը: Նույն քրեական գործով 1992թ. մարտի 7-ին Աղդամում որպես վկա հարցաքննվել է Խոջալուի բնակիչ, 1966 թ. ծնված, երկու երեխայի հայր, Խոջալուի «ինքնապաշտպանական» գումարտակի 4-րդ դասակի նախկին հրամանատար Շաքիր Շահլար օղլու Հասանովը: Հարցաքննությունը վարել է Ադրբեջանի դատախազության հատուկ կարեւոր գործերով քննիչ Մ. Հուսեյնովը:

**Հարց-** Ի՞նչ եք կարծում, ո՞վ է մեղավոր, որ զոհվել են Խոջալուի խաղաղ բնակիչներ:

**Պատասխան-** Փետրվարի 25-ի դեպքերից 8-10 օր առաջ Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Թամեռլան Գարաեւը հեռախոսով բազմիցս դիմել է Խոջալու «քաղաքի» (չակերտները մերն են- Վ. Ա.) բնակիչներին, որ խուճապի չմատնվեն, օգնության են գալու Ազգային բանակի զորքերը, բայց օգնություն չի եկել: Ես գտնում եմ, որ Թամեռլան Գարաեւը մարդկանց միտումնավոր մատնել է հոշոտման: Հազարավոր (՞- Վ. Ա.) մարդկանց մահը նրա խղճի վրա է, նա պետք է դատի տրվի եւ ենթարկվի քրեական պատասխանատվության (տես՝ http://www.erevangala500.com/booke//pdf/1323994124.pdf):

Կրկնենք, Շաքիր Հասանովը հարցաքննվել է 1992թ. մարտի 7-ին, նախագահի պաշտոնից Մութալիբովի հրաժարականից երկու օր հետո: Իսկ թե ինչո՞ւ Թամեռլան Գարաեւը Խոջալուի դեպքերից միայն 7 ամիս անց եւ դարձյալ վկայի կարգավիճակով է հարցաքննվել կամ ինչո՞ւ Շաքիր Հասանովի ցուցմունքի մասով նրան հարց չի առաջադրվել, կապված է քաղաքական հանգամանքների հետ. 1992-ի գարնանը փաստացի իշխանության եկած ԱԺՃ-ն չէր կարող դատի տալ եւ քրեական պատասխանատվության ենթարկել կազմակերպության կարկառուն ներկայացուցիչներից մեկին: Ի դեպ, հարցաքննության թերթիկում Գարաեւն իրեն անվանել է «անկուսակցական»:

ԱԺՃ պարագայում Գարաեւի հանդեպ վերաբերմունքը հասկանալի է: Իսկ թե ո՞րն է պատճառը, որ իշխանության գալով Հեյդար Ալիեւը նրան «ազատ աքսորական» է դարձրել՝ դիվանագիտական աշխատանքի նշանակելով Չինաստանում, իսկ Իլհամ Ալիեւը՝ շարունակել ավանդույթը, մնում է միայն ենթադրել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Վարչապետ Էրդողանին կհաջողվի՞ լուծել քրդական հարցը, չգիտենք

## *Բայց կարգավորման նախապայմանը արյունահեղության դադարեցումն է*

Թուրքիայում օրակարգի առաջնահերթ խնդիրը Քուրդիստանի աշխատավորական կուսակցության PKK-ի հետ հաշտեցման գործընթացն է: Թեեւ գործընթացը սկզբնավորվել է PKK-ի բանտարկյալ առաջնորդ Աբդուլլահ Օջալանի մարտի 21-ի ուղերձով, որտեղ նա իր կազմակերպության մարտիկներին զենքը վայր դնելու եւ երկրի սահմաններից հեռանալու կոչ էր արել, սակայն ուղերձին նախորդել էին թուրքական իշխանությունների հետ ամիսներ տեւող բանակցությունները:

Թե ինչ ընթացք կունենա PKK-թուրքական իշխանություն հաշտեցումը, դժվար է կռահել: Դժվար է կռահել նաեւ այն, թե երկրի սահմաններից PKK-ի մարտիկների անզեն հեռացումից հետո վարչապետ Էրդողանի կառավարությունը ինչ քայլեր կձեռնարկի երկրում քրդական հարցի լուծման ուղղությամբ, չգիտենք: Բայց որ այդ հարցի լուծման PKK-իշխանություն հաշտեցումը չի հանգեցնի երկրում թուրք-քուրդ հաշտեցման, ակնհայտ է:

Կան նաեւ այլ հարցեր: Օրինակ՝ քրդերին որքանով կբավարարեն Էրդողանի կառավարության քայլերը կամ քրդական հարցի կարգավորում ասելով ի՞նչ են նրանք հասկանում: Այս հարցերը հստակ պատասխան առայժմ չունեն: Միանշանակ չէ նաեւ զենքը վայր դնելու Օջալանի կոչին PKK-ականների մոտեցումը:

Ինչ վերաբերում է թուրքական քաղաքական շրջանակներին, ապա նրանք էլ PKK-ի հետ հաշտեցման գործընթացը պայմանավորում են Թուրքիայում կառավարման նախագահական համակարգին անցնելու վարչապետ Էրդողանի հաշվարկների հետ, թե քրդերին զիջումներ է անում, որ նախագահ ընտրվելու առումով ստանա քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորների աջակցությունը խորհրդարանում:

Ավելին, ընդդիմադիր, ազգայնական շարժում կուսակցությունը հաշտեցման գործընթացի համար վարչապետ Էրդողանին շարունակաբար մեղադրում է դավաճանության մեջ, իսկ ժողովրդա-հանրապետական կուսակցությունը հայտարարություն է անում, թե իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը մտադիր է երկրում փոխել վարչական համակարգը:

Այլ կերպ, PKK-ի հաշտեցման հարցում վարչապետ Էրդողանի վիճակը ավելի քան աննախանձելի է: Ընդ որում, Թուրքիայում իշխանությունն ու ընդդիմությունը, թուրքերն ու քրդերը, ինչպես նաեւ PKK-ն գիտակցում են արյունահեղությանը վերջ տալու անհրաժեշտությունը: Դրա նախապայմանը PKK-ի հետ անվտանգության ուժերի բախումների դադարեցումն է, դա ենթադրում է, որ քրդական այս կազմակերպության մարտիկները վայր դնեն զենքը:

Համենայն դեպս, եթե ոչ քրդական հարցի կարգավորման, ապա գոնե արյունահեղության դադարեցման հարցում վարչապետ Էրդողանը վճռական է: Շնորհիվ նրա հաշտեցման այս նախաձեռնության, վերջին երեք ամիսների ընթացքում ոչ PKK-ն, ոչ էլ թուրքական անվտանգության ուժերը զոհեր չեն տվել: Մինչդեռ, անցյալ տարի կողմերից յուրաքանչյուրի տված զոհերի թիվը գերազանցել էր 880-ը:

Խնդիրը, սակայն, սոսկ վարչապետ Էրդողանը չէ, այլ իբրեւ քաղաքական նախաձեռնություն թուրք-քուրդ հաշտեցմանը նպաստելու համար նրա ձեւավորած «իմաստուն գործիչների» պատվիրակությունը, որի անդամները նույնպես դարձել են ընդդիմության հարձակումների թիրախը: Այդ անդամներից, որոնց մեջ է մեր հայրենակից Էթիեն Մահճուպյանը, թերեւս պետք է առանձնացնել Մուրադ Բելգեին, Դողու Էրգիլին, Բերիլ Դեդեօղլուին, Օրալ Չալըշլարին եւ Բաքըն Օրանին:

Նրանց մի մասը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, իսկ մյուսը պահանջում է, որ Թուրքիան վերանայի Հայոց ցեղասպանության պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականությունը:

«Իմաստուն գործիչների» պատվիրակությունը բաժանվել է յոթ վարչատարածքային խմբերի, որոնք բացատրական աշխատանքներ են տանում բնակչության շրջանում: Էգեյան խումբը ապրիլի 13-ին եղել է Իզմիրում, որտեղ «Ջումհուրիեթի» վկայությամբ ցնցող հայտարարություններ է արել խմբի անդամ Բաքըն Օրանը:

Ահա թե ինչ է ասել. «Մենք 1915-ին հայերի ջարդերից հետո կարեւոր որեւէ խնդիր չենք լուծել: Բոլոր խնդիրներն ավլել ենք բազմոցի տակ: Հայկական հարցը, քրդական հարցը, իսլամականության խնդիրը երկրում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությամբ գուցե մի քիչ ցավոտ ձեւով, բայց մտան կարգավորման փուլի մեջ: Հայկական հարցի լուծումը դեռեւս ժամանակ է պահանջում: Քրդական հարցը շարունակում է որպես տաբու ծառանալ մեր առջեւ: Այս խնդիրները բազմոցի տակ ավլելիս չէինք հաշվարկել, որ դրանք այնտեղ կնեխեն եւ զոմբիացած կհարձակվեն մեզ վրա: Ահա այդ զոմբիները ոչ թե թաղված, այլ բազմոցի տակ ավլված դիակներն են, որ ահ ու սարսափ են ներշնչում մեզ: Ես ուզում եմ քանդել ազգային այս պետությունը, որը կազմավորված է մեկ ազգի գերազանցության սկզբունքով»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ստեղծվել է անօդաչու ուղղաթիռ

MQ-8C Fire Scout անվանակոչված ուղղաթիռում բացակայում է օդաչուի բազկաթոռը: Էլեկտրոնային բոլոր անհրաժեշտ սարքավորումներով հանդերձավորված այդ անօդաչու ուղղաթիռը Northrop Grumman կորպորացիայի վերջին մշակումն է:

Նոր մեքենայի հիմքում փրկարարական եւ ռազմական գործողություններում, ինչպես նաեւ կինոյում եւ լրագրության մեջ լայնորեն կիրառվող Bell 407 ուղղաթիռն է:

Լիովին ավտոմատացված անօդաչու ուղղաթիռն ունի չորս պտուտակաթեւ, մեկ շարժիչ եւ երկու ստուգված օդային համակարգեր: «Ուղղաթիռը կկատարի դիտարկման, հետախուզման եւ թիրախի կալանման մի շարք գործառույթներ, որոնց իրականացման համար հանդերձավորված է հատուկ սենսորներով», ասվում է ընկերության մամլո տեղեկագրում: Fire Scout-ը կարող է օգտակար լինել թե՛ ծովի եւ թե՛ ցամաքի վրա, կարողանում է ճանաչել վայրէջքի համար պիտանի եւ ոչ պիտանի տարածքները:



Նախագիծը ֆինանսավորած ԱՄՆ ծովուժը Northrop Grumman-ի հետ ստորագրել է 71 մլն դոլարանոց պայմանագիր: Ծովուժը նաեւ պատվիրել է 30 անօդաչու ուղղաթիռ: Առ այսօր արդեն արտադրված է 1000-ից ավելի նման մեքենա:

MQ-8C Fire Scout-ը կարող է կատարել նաեւ քաղաքացիական խնդիրներ, բայց նախատեսված է հատկապես ռազմական առաջադրանքների համար:

Այս մեքենայի միակ թերությունն այն է, որ կարող է հայտնվել հակառակորդի ձեռքին: Ամերիկացի ճարտարագետները մտադիր են կատարելագործել անօդաչու ուղղաթիռը եւ հետագայում ապահովել էլեկտրոնային ուղեղը «կոտրանքից» պաշտպանող հուսալի համակարգով:

ԶՈՀՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 40 ՄԱՐԴ

# Ուժեղ երկրաշարժ Իրանի արեւելքում




**Ապրիլի 16-ին Իրանի եւ Պակիստանի սահմանամերձ շրջաններում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Ամերիկյան երկրաբանական ծառայությունը հաղորդում է 7,8 մագնիտուդով ստորգետնյա ցնցման մասին, emse-csem.org կայքէջում նշվում է 7,7 մագնիտուդ:**

**Նախնական տվյալներով, զոհվել է առնվազն 40 մարդ: Իրանցի որոշ պաշտոնյաներ կարծում են, որ զոհերի թիվը կարող է աճել:**

**Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ էպիկենտրոնը եղել է սակավաբնակ վայրում, իրանական Զահեդան քաղաքից մոտ 200կմ հարավ-արեւելք եւ պակիստանյան Թուրբաթ քաղաքից 250 կմ հյուսիս-արեւմուտք:**

**Իրանցի պաշտոնատար անձինք ենթադրում են, որ կարող են լինել խոշոր ավերածություններ: Նրանց տվյալներով, խոսքը վերջին 40 տարվա ամենաուժեղ երկրաշարժի մասին է: Ցնցումները զգացվել են նույնիսկ Նյու Դելիում, Դուբայում եւ Բահրեյնում:**

**Ռուսական «Ատոմստրոյէքսպորտ» ընկերությունը հայտարարել է, որ Բուշեհրի ԱԷԿ-ը երեկվա երկրաշարժից չի տուժել:**

**Ապրիլի 9-ին 6,3 մագնիտուդով երկրաշարժ էր արձանագրվել Իրանի հարավ-արեւմուտքում՝ Բուշեհրից 90 կմ հեռավորության վրա: Այն ժամանակ զգալիորեն տուժել էր մի քանի բնակավայր, զոհվել էին առնվազն 37 եւ վիրավորվել 850 անձինք:**

# Ֆրանսիացի նախարարները հայտարարագրել են իրենց ունեցվածքը

Ֆրանսիայի պատմության մեջ առաջին անգամ կառավարության անդամները եւ վարչապետ Ժան-Մարկ Էրոն իրենց ունեցվածքի վերաբերյալ տվյալներ են հրապարակել, դրանք զետեղելով կառավարության կայքում: Այս ձեւով նախագահ Օլանդը փորձում է հակադարձել այն մեղադրանքներին, թե իր կառավարությունը կազմված է «հարուստ ձախերից»:

Հայտարարագրված տվյալները կարելի է գտնել մասնավորապես «Ֆիգարո» թերթում եւ մի շարք այլ լրատվամիջոցներում: Ներկայիս կառավարության անդամների մեջ ամենահարուստը արտգործնախարար Լորան Ֆաբիուսն է, որն իր ունեցվածքը գնահատում է 6 մլն եվրո: Այդ գումարի մեծ մասը (3,9 մլն) կազմում է Փարիզում եւ շրջակայքում գտնվող անշարժ կայքը:

Պակաս հարուստ է տարեցների գործերի նախարար Միշել Դելոնեն: Նրա ունեցվածքը գնահատվում է 5,6 մլն եվրո: Ինչ վերաբերում է վարչապետ Էրոյին, նրա կարողությունը կազմում է 1,55 մլն եվրո:

Նախարարներից շատերը հայտարարագրել են ակտիվների զգալիորեն փոքր ծավալներ: Ի դեպ, կառավարության անդամներից ոչ մեկը պարտավոր չէր նշել կողակցի կամ ուրիշ մերձավոր հարազատների ունեցվածքը:

Օրինակ՝ ֆինանսների նախարար Պիեռ Մոսկովիսին ունի 270 հազար եվրո, որի մեծ մասը կազմում է երկրի արեւելքում՝ Մոնբելիարում գտնվող բնակարանի արժեքը: «Ամենաաղքատը» ներքգործնախարար Մանյուել Վալսն է, որի ընթացիկ հաշվի վրա կա ընդամենը 108 եվրո:

Նախագահ Ֆրանսուա Օլանդը իր ունեցվածքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացրել էր անցյալ տարի, հայտնելով, որ այն գնահատվում է 1,17 մլն եվրո: Լոնդոնի «Ֆայնենշըլ թայմս» թերթը հաղորդում է, որ Օլանդը մտադիր է մոտ ժամանակներս խորհրդարանում անցկացնել օրենք, որը կպահանջի տեղեկություններ հրապարակել բոլոր նշանակալի (այդ թվում տեղական) պաշտոնական անձանց եկամուտների եւ կարողության վերաբերյալ:

Պետծառայողների եկամուտների բացահայտման արշավը սկսվեց բյուջեի նախկին նախարար Ժերոմ Կայուզակի հետ կապված սկանդալից հետո: Կայուզակը շվեյցարական բանկերից մեկում գաղտնի հաշվի վրա ունեցած խոշոր գումարի պատճառով ստիպված էր եղել հրաժարական տալ, քանի որ իրեն կասկածում էին հարկերից խուսափելու եւ փող լվանալու մեջ:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին պատկանող ՎԱԶ-21 012 մակնիշի, 2003թ. արտադրության ավտոմեքենա: Ցանկացողները կարող են զանգահարել Գոռ Մելքումյանին (096) 76 07 80 և Դավիթ Ղազարյանին (055) 77 37 87 հեռախոսահամարներով:

## Մշակույթ

# Տանգոյի միջազգային փառատոն




«Տանգոյի» ընչով ութ համերգային ծրագիր՝ երեւանյան տանգոյի միջազգային փառատոնի շրջանակում: Այս տարի փառատոնի օտարերկրացի հյուրերն են՝ արգենտինացի հայտնի բանդոնեոնահար Վալտեր Ռիոսին եւ երգչուհի Մարիել Դյուպետին:

Նրանք ելույթ կունենան «Կադանս» անսամբլի հետ Գյումրիում եւ Երեւանում: Մասնավորապես՝ ապրիլի 17-ին «Վերածնունդ» միջազգային 5-րդ փառատոն-մրցույթի շրջանակում՝ Գյումրիում, իսկ ապրիլի 20-ին Երեւանում՝ Արամ Խաչատրյան համերգասրահում: Փառատոնի 7-րդ համերգը նախատեսված է մայիսին Վանաձորում, իսկ եզրափակիչ 8-րդ համերգը՝ հունիս-հուլիս ամիսներին:

Իսկ մարտի 26-ից ապրիլի 5-ը «Կադանս» անսամբլի նախափառատոնյան ելույթները նախատեսված էին երիտասարդության համար՝ Երեւանի պետական համալսարանում, Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական եւ Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարաններում:

Ի դեպ, եզրափակիչ համերգը հատկանշանական է այն առումով, որ նախատեսվում է Աստոր Պյացոլլայի «Տարվա եղանակներ» համահայտ ստեղծագործության համաշխարհային շնորհանդեսը: Պյացոլլայի այս գլուխգործոցը հայ կոմպոզիտոր Կարեն Անանյանի կողմից հատուկ վերամշակվել է հնգյակի, մարիմբայի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար, որպեսզի «Կադանս» անսամբլը եւ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը ներկայացնեն 2013 թ. Երեւանյան միջազգային տանգո փառատոնի շրջանակներում:

ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության դեսպան Դիեգո Ալվարես Ռիվերան փառատոնը կարեւորում է, քանի որ այն եւս ապահովում է երկու երկրների միջեւ մշակութային կապ:

Ըստ մշակույթի նախարարի տեղակալ Արթուր Պողոսյանի տանգոյի միջազգային փառատոնը արդեն հասցրել է սիրվել նաեւ հանրության կողմից. «Տանգոյի միջազգային փառատոնը որոշակի ուղղվածություն է ապահովում երաժշտական փառատոնների շրջանում: Փառատոնը կարեւոր է նրանով, որ անցկացվում է նաեւ մարզերում»:

Հատկանշական է, որ Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգը՝ որպես անակնկալ կկատարի արգենտինացի երգչուհի Մարիել Դյուպետին. «Սովորաբար որ երկրում համերգ եմ տալիս, նախքան այդ մի փոքր ծանոթանում եմ երկրի մշակույթին, իսկ այդ մշակույթը կրող ժողովրդին շնորհակալություն հայտնելու համար այդ լեզվով որեւէ ստեղծագործություն եմ կատարում»:

Ինչպես պատմեց երգչուհին, սկզբում, երբ լատինատառ կարդաց երգի բառերը, դժվարությունների առջեւ կանգնեց, ապա հայերի օգնությամբ սերտեց բառերը եւ այժմ ճիշտ շեշտադրությամբ է կատարում: Մարիել Դյուպետի համար իրար հասկանալու ամենալավ տարբերակը երաժշտությունն է:

Իսկ արգենտինացի բանդոնեոնահար Վալտեր Ռիոսն առաջին անգամ է գտնվում Հայաստանում: Անդրադառնալով համերգային ծրագրին եւ «Կադանս» անսամբլին, ասաց, որ իր վրա շատ լավ տպավորություն է գործել. «Կադանս» անսամբլի անդամները բացի լավ երաժիշտներ լինելուց, նաեւ լավ մարդիկ են»: Երաժիշտը նաեւ շփվում է Արգենտինիայի հայ համայնքի հետ եւ ունի մի շարք հայ երաժիշտ ընկերներ: Մաեստրո Ռիոսը ձայնագրել է արգենտինյան ու լատինամերիկյան շատ ֆիլմերի երաժշտություններ՝ աշխատելով այնպիսի ռեժիսորների ու գործիքավորողների հետ, ինչպիսիք են Օսկար Օքամպոն, Մարիանո Մորեսը, Լեոնարդ Բակարդին եւ Լալո Շիֆրին: Երաժիշտը հրավիրվել է նաեւ Լոնդոն, համերգներ տալու Բուկինգեմի պալատում՝ Անգլիայի թագուհու համար: Վալտեր Ռիոսը «Տանգո» եռյակի հիմնադիրն է, բացի այդ հանդիսանում է Բուենոս Այրեսի երաժշտական քառյակի հիմնադիրներից մեկը:

Նշենք, որ փառատոնի առաջին համերգը կայացել է 2010 թ. հոկտեմբերի 30-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, այնուհետեւ, 2011 թ. ապրիլին տեղի է ունեցել արգենտինացի աշխարհահռչակ բանդոնեոնահար Մարսելո Նիսինմանի եւ դիրիժոր Ֆակունդո Ագուդինի երկու համերգը «Կադանս» անսամբլի եւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Նույն տարվա մայիսին, Երեւանում փառատոնի շրջանակներում, կայացել է Ռուսաստանի հեղինակավոր խմբերից մեկի՝ «Տերեմ» քառյակի երկու անմոռանալի ելույթ եւս:

Մ. Հ.

# Կարեն Գրիգորյանի անհատական ցուցահանդեսը

**Օրերս՝ Հայաստանի նկարիչների միությունում բացվեց Երեւանի դրամատիկական թատրոնի նկարիչ Կարեն Գրիգորյանի անհատական ցուցահանդեսը՝ նվիրված թատրոնի 45-ամյակին:**

**Ցուցահանդեսի համակարգողն է Հարություն Թորոսյանը:**

**Բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, այնուհետեւ ելույթ ունեցավ Հարությունը Թորոսյանն, ով հակիրճ ներկայացրեց Կարեն Գրիգորյանի անցած ուղին ու հույս հայտնեց, որ նմանատիպ միջոցառումները այսուհետ կլինեն շարունակելի, հետո խոսեց Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանը՝ ներկայացնելով Կարեն Գրիգորյանին որպես արվեստագետ, մտավորական ու հասարակական գործիչ:**

**Ելույթներով հանդես եկան նաեւ այլ արվեստագետներ, մշակույթի գործիչներ, ովքեր իրենց սրտի խոսքն ու կարծիքն արտահայտեցին նկարչի արվեստի նկատմամբ:**

**Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ Կարեն Գրիգորյանը:**

**Ցուցահանդեսը կգործի մինչեւ ապրիլի 20-ը:**

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Անդրանիկի փ. 97/5 | Կաթսայատուն | 231.94 | 201.11 | 12,450,000 |
| 2 | Անդրանիկի փ. 40/3 | Կաթսայատուն | 337.28 | 287.92 | 21,500,000 |
| 3 | Էրեբունի 14/4 | Կաթսայատուն | 170.18 | 145.68 | 9,820,000 |
| 4 | Հ/Ա Բ-2 թաղ. 89/3 շին. | Կաթսայատուն | 317.51 | 283.04 | 11,020,000 |
| 5 | Ուլնեցու փ. 3, փակ.4/3 | Կաթսայատուն | 469.01 | 431.6 | 21,500,000 |
| 6 | Շիրակի փ.6/10 | Կաթսայատուն | 309.5 | 207.98 | 14,220,000 |
| 7 | Ա.Սարգսյան 5/2 | Կաթսայատուն | 127.4 | 99.18 | 6,000,000 |
| 8 | Շիրազի 42/5 | Կաթսայատուն | 239.71 | 129.96 | 8,200,000 |
| 9 | Հալաբյան 41/3 | Կաթսայատուն | 257.12 | 161.46 | 10,100,000 |
| 10 | Մալխասյանց 23/6 | Կաթսայատուն | 169 | 144 | 9,600,000 |
| 11 | Սեւակի 7/6 | Կաթսայատուն | 190.29 | 139.2 | 11,400,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աջ կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ մայիսի 3-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ մայիսի 3-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ԹԲԻԼԻՍԻ

# Հիշատակի միջոցառումներ նվիրված Հայոց մեծ եղեռնին




**Ապրիլի 13-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում բացվեց Հայոց մեծ Եղեռնի 98-րդ տարելիցին նվիրված «Հայոց Գողգոթա» խորագրով ցուցահանդեսը: Այն կազմակերպել էին Վրաստանի Հայ նկարիչների միությունը եւ Ջավախքի երիտասարդ նկարիչների ընկերակցությունը՝ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի հոգաբարձուների խորհրդի, Վրաստանում ՀՀ դեսպանության, ՀՀ Սփյուռքի նախարարության եւ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ:**

**Ցուցահանդեսին իրենց աշխատանքները էին ներկայացրել Թբիլիսիի, Ջավախքի, ինչպես նաեւ ծնունդով Վրաստանցի, բայց ներկայումս Հայաստանում գործող նկարիչները: Բացելով ցուցահանդեսը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը տեղեկացրեց, որ ցուցահանդեսին մասնակցած շուրջ 35 ստեղծագործողների մեծամասնությունը երիտասարդներ են, ովքեր Հայոց Մեծ Եղեռնի մասին պատկերացում ունեն միայն հաղորդածով: Եվ ցուցասրահում տեղ գտած շուրջ 60 կտավները գույների միջոցով արտահայտված նրանց ցասումն է, արդարության եւ հատուցման պահանջը անմեղ նախնիների տառապանքների եւ դաժան նահատակության համար:**

**Վրաստանի «Հերակլ Երկրորդ» ոչ կառավարական կազմակերպության ղեկավար Արչիլ Ճկուիձեն, ողջունելով ցուցահանդեսի կազմակերպումը, իր խոնարհումը բերեց ցեղասպանության զոհերի հիշատակի առջեւ, կոչ անելով Վրաստան երկրի իշխանություններին՝ հարգել հարեւան քրիստոնյա ժողովրդի ցավը, ճանաչել 1915 թվականի Հայոց եղեռնը եւ հուշարձան կանգնեցնել զոհերի հիշատակին:**

**Իրենց բողոքը միջազգային հանրության անարդար եւ անտարբեր վերաբերմունքի նկատմամբ արտահայտեցին գրող-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Վրաստան« թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, ռեժիսոր Միքայել Գրիգորյանը, պատմաբան Ենոք Թադեւոսյանը:**

**Այնուհետեւ դասական եւ հոգեւոր երգերի կատարմամբ հանդես եկան «Հայարտուն» կենտրոնի «Ներսես Շնորհալի» ավագների երգչախումբը (խմբավար՝ Հովհաննես Համբարձումյան), Սուրբ Էջմիածին եկեղեցու երգչախումբը (խմբավար՝ Սվետլանա Տատոեւա), հնչեցին մեղեդիներ դուդուկահար Վանո Մկրտչյանի եւ դաշնակահար Կարեն Միրզոյանի կատարմամբ:**

**Օրհնության եւ գնահատանքի իր խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնությունը բաշխեց բոլոր մասնակիցներին, այս միջոցառումը, ինչպես նաեւ նմանատիպ այլ միջոցառումները համարեց որպես հուշակոթող անմեղ հայ նահատակներին:**

**Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը եւ Ջավախքի երիտասարդ նկարիչների ընկերակցության նախագահ Հայկազուն Ղարագուլյանը ներկայացրեցին այն ստեղծագործողներին, ում աշխատանքները ճանաչվել են լավագույն:**

**Ցուցահանդեսի ամենաերիտասարդ մասնակից ճանաչվեց Քրիստինե Բագդացյանը: Երրորդ մրցանակին արժանացավ Լիլիթ Արսենյանը, երկրորդ մրցանակին՝ Անի Քանանյանը, իսկ առաջին մրցանակը շահեց Մարիամ Տիպուխյանն իր «Սգացող կինը» կտավով: Նրանց բոլորին Վիրահայոց Թեմի Առաջնորդարանի կողմից տրվեցին դրամական պարգեւներ:**

**Ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ ապրիլի 30-ը:**

# «Գյումրին՝ ԱՊՀ 2013 թ. մշակութային մայրաքաղաք» ծրագրի խորհրդանշանն ու կայքը պատրաստ են

«Գյումրին՝ ԱՊՀ 2013 թ. մշակութային մայրաքաղաք» միջոցառումների ծրագիրը մեկնարկելու է հունիսի 2-ին, քաղաքի կենտրոնական հրապարակում կայանալիք շքեղ հանդիսությամբ, իսկ ավարտվելու է նոյեմբեր ամսին: Կազմակերպվելիք բազմատեսակ միջոցառումներին մասնակցելու եւ ներկա են լինելու հյուրեր 13 երկրներից, Գյումրու քույր քաղաքներից: Այժմ ծրագրի իրագործման ակտիվ նախապատրաստական աշխատանքներ են ընթանում:

Դեռ հունվար ամսին Գյումրու քաղաքապետարանն ու ՀՀ մշակույթի նախարարությունը նաեւ ծրագրի խորհրդանշանի ու կայքէջի համատեղ մրցույթ էին հայտարարել: Դրանք երկուսն էլ արդեն պատրաստ են, ապրիլի 15-ին քաղաքապետարանում կազմակերպվել էր դրանց շնորհանդեսը:

Ընդունված խորհրդանշանը, որի հեղինակը Լիանա Աբրահամյանն է (Երեւան), մեկնաբանվում է որպես երեք երիտասարդ պարուհիների մի ընդհանուր ուրվագիծ, որոնց վեր պարզած ձեռքերում ներկայացված են արվեստի ճյուղերը՝ թատրոն, երաժշտություն, նկարչություն եւ այլն: Ծաղկի կամ ծառի տեսքով ներկայացվող պատկերի գունային հիմքը մեր եռագույնն է, իսկ երկու ծայրերի կանաչն ու մանուշակագույնը խորհրդանշում են, համապատասխանաբար, զարգացումն ու փոփոխությունները:

«Գյումրին՝ ԱՊՀ 2013 թ. մշակութային մայրաքաղաք» ծրագրի gyumri.am եռալեզու կայքը, պատասխանատուների մեկնաբանությամբ, ստեղծվել է պարզության ու առավել կարեւորը ներկայացնելու սկզբունքով, թեեւ ունի մի շարք առավելություններ, որոնք երեւի կգնահատեն օգտվողները: Առանձին բաժիններով ներկայացվում են հին ու նոր Գյումրին՝ իր պատմությամբ, մշակույթով, իր մեծերով ու ներկայով, Հայաստանը, նաեւ ԱՊՀ-ն: Բաժինները հարուստ են ներկայացվող թեմաների վերաբերյալ տեղեկություններով, լուսանկարներով ու տեսանյութերով: Կայքը մշտապես թարմացվելու է, ներկայացվելու են նաեւ ծրագրի հետ կապված բոլոր նորությունները:

Գ. Մ.

# Մարզական

## Մխիթարյանի նկատմամբ հետաքրքրությունն աճում է

*Կցանկանա՞ «Շախտյորը» բաժանվել իր ռմբարկուից*



Ուկրաինայի առաջնությունում Հենրիխ Մխիթարյանի արդյունավետ խաղը գրավել է եվրոպական մի խումբ ակումբների ուշադրությունը, որոնք ցանկանում են իրենց կազմում ընդգրկել հայ ֆուտբոլիստին: Վերջին շրջանում նման խոսակցությունները շատ են:

Հենրիխ Մխիթարյանն էլ արդեն սկսել է որոշ չափով բացել փակագծերը: Մասնավորապես «Մեծ ֆուտբոլ» հեռուստահաղորդման ժամանակ նա հետեւյալն է ասել. «Կցանկանայի խաղալ եվրոպական ուժեղ առաջնություններից մեկում: Ինձ լավ եմ զգում «Շախտյորում», սակայն կարծում եմ, որ ակումբի ղեկավարությունն ըմբռնումով կմոտենա իմ ցանկությանը, քանի որ յուրաքանչյուր ֆուտբոլիստ ժամանակի ընթացքում ցանկանում է փոխել թիմը: Կարծում եմ, որ մրցաշրջանի ավարտին ամեն ինչ պարզ կլինի»:

Մխիթարյանով հատկապես շատ են հետաքրքրված անգլիական ակումբները՝ «Չելսին», «Մանչեսթր Սիթին», «Արսենալը», «Լիվերպուլը», «Տոտենհեմը»: Ըստ անգլիական լրատվամիջոցների, Հենրիխը «Չելսիում» դիտարկվում է որպես Ֆրենկ Լեմփարդի գլխավոր փոխարինող: Վերջինս մրցաշրջանի ավարտից հետո պատրաստվում է հեռանալ թիմից: Հավանաբար նա կընտրի «Լոս Անջելես Գելեքսին», որտեղ հանդես էր գալիս Դեւիդ Բեքհեմը:

Հիշեցնենք, որ Հենրիխ Մխիթարյանը մինչեւ 2015-ի ամառը գործող պայմանագիր ունի «Շախտյորի» հետ: Ֆուտբոլային հայտնի գործակալ Դմիտրի Սելյուկը, որը մեծ դերակատարում ունի Դոնեցկի «Մետալուրգից» «Շախտյոր» Հենրիխի տեղափոխության հարցում, կասկածում է, որ ակումբի նախագահ Ռինատ Ախմետովը կհամաձայնվի վաճառել Մխիթարյանին:

Ինչ խոսք, ամեն ինչ կախված է «Շախտյորի» ղեկավարությունից: Թիմի գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն էլ մեկ անգամ չէ, որ հայտարարել է, թե կցանկանար, որ Մխիթարյանը շարունակեր երկար տարիներ հանդես գալ իր գլխավորած թիմում: Եթե իրոք «Շախտյորը» մտադիր չէ տրանսֆերի հանելու Մխիթարյանին, ապա եվրոպական ակումբներից առաջարկի դեպքում կարող է բավականին խոշոր գումար պահանջել, որպեսզի գործարքն այդպես էլ տեղի չունենա:

## Սերգեյ Մովսիսյանն արժանացավ ՌԴ չեմպիոնի տիտղոսին



Սերգեյ Մովսիսյանը Սանկտ Պետերբուրգի շախմատի ֆեդերացիայի թիմի կազմում դարձավ Ռուսաստանի չեմպիոն: Թիմային առաջնության ավարտական 2 տուրերում Մովսիսյանի թիմը 6-րդ տուրում 4-2 հաշվով հաղթեց Մոսկվայի «Նաշե նասլեդիեին», իսկ ահա վերջին մրցախաղում 2,5-3,5 հաշվով պարտվեց «Ռոստովին»: 2 մրցախաղերում էլ Մովսիսյանը հաշտություն կնքեց Ռադոսլավ Վոյտաշեկի եւ Սերգեյ Ժիգալկոյի հետ:

Սանկտ Պետերբուրգի թիմը վաստակեց թիմային 11 միավոր: Նույնքան միավոր ուներ նաեւ «Մալախիտը»: Սակայն բոլոր պարտիաներում վաստակած միավորների քանակով (26) Սանկտ Պետերբուրգի թիմը հռչակվեց չեմպիոն: Սերգեյ Մովսիսյանը թիմի կազմում անցկացրած 6 պարտիաներում պարտություն չկրեց ու վաստակեց 4 միավոր: Դա լավագույն արդյունքն է Մաքսիմ Մատլակովի, Զախար Եֆիմենկոյի ու Լեյնիեր Դոմինգուեզի հետ: Ընդ որում վերջինս անցկացրել է 7 պարտիա:

Ընդհանրապես Սերգեյ Մովսիսյանը սիրում է հանդես գալ տարբեր երկրների ակումբային առաջնություններում՝ բազմիցս դառնալով մրցանակակիր:

Դեսնոգորսկի «Ատոմի» կազմում հիմնականում հայ շախմատիստներ էին ընդգրկված: Ավարտական տուրերում հաղթելով «Յամալին» (4-2) ու «Ռակիտային» (3,5-2,5), «Ատոմը» 16,5 միավորով 18 թիմերի մեջ գրավեց 10-րդ տեղը: Թիմի կազմում լավագույն արդյունքը ցույց տվեց միջազգային վարպետ Վահե Բաղդասարյանը, որը 7 հնարավորից վաստակեց 4,5 միավոր: 3,5-ական միավոր վաստակեցին Գեւորգ Հարությունյանն ու Տիգրան Սիմոնյանը:

Իսկ ահա «Պերսպեկտիվան» 15,5 միավորով զբաղեցրեց նախավերջին՝ 17-րդ տեղը: Արթուր Գաբրիելյանը վաստակեց ընդամենը 2 միավոր 7 պարտիաներում, իսկ Գոռ Հայրապետյանը թիմին պարգեւեց 1,5 միավոր:

## Գարի Կասպարովը կրկին կօգնի Մագնուս Կառլսենին

Ապրիլի 13-ին ծննդյան 50-ամյակը նշած շախմատի աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը այս օրերին գտնվում է Օսլոյում: Նրան առաջարկվել է վերսկսել համագործակցությունը Մագնուս Կառլսենի հետ եւ օգնել նորվեգացի գրոսմայստերին հաղթելու աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդին: Կասպարովը սիրով համաձայնվել է:

«Հաճույքով կօգնեմ Կառլսենին: Լավ հարաբերություններ եմ պահպանում Կառլսենի եւ նրա շրջապատի հետ: Եթե Մագնուսը լավ կատարի տնային աշխատանքը եւ հոգեբանորեն պատրաստ լինի, ապա կնվաճի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Սակայն աշխարհի չեմպիոնի տիտղոսի մրցամարտը տարբերվում է մյուս մրցաշարերից, քանի որ մշտապես խաղում ես միեւնույն մրցակցի դեմ: Պետք է մոռանալ, որ Կառլսենի խաղում դեռեւս թույլ կողմեր կան, իսկ Անանդը դրանք հմտորեն օգտագործելու հարցում մեծ վարպետ է: Հնդիկ շախմատիստի առավելություններից մեկն էլ փորձառությունն է: Բացի այդ էլ, հավանաբար մրցախաղն անցկացվի Հնդկաստանում, ինչը եւս կարող է Անանդին որոշ առավելություն տալ», նշել է Գարի Կասպարովը:

## Տիգրան Ղարամյանը հաջող է մեկնարկել

Ֆրանսիայի Լիլ քաղաքում անցկացվող շախմատի մրցաշարում հաջող է հանդես գալիս գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը, որը 4 հնարավորից վաստակել է 3 միավոր: Նա հաղթել է Յանիկ Կամբրասին ու Պանու Լայնեին, ոչ-ոքի է խաղացել Մաուրիցիո Վասալոյի եւ Դեմիե Քերիգանի հետ:

4 տուրից հետո 3,5-ական միավորով առաջատարներն են Սուրի Վայբանավը, Լուիս Արիզմենդին, Ֆիլիպ Պանկեւսկին եւ Մարիուս Մանոլաչեն:

**ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ**

## Հայ սամբիստների հարուստ ավարը

Կիպրոսի Լիմասոլ քաղաքում ավարտված սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների եւ աղջիկների առաջնությունում վերելքով հանդես եկան հայ սամբիստները: Առաջնությանը մասնակցած 22 հայ սամբիստներից ուղիղ կեսն արժանացան մեդալների՝ 3-ական ոսկե եւ արծաթե, 5 բրոնզե:

Եվրոպայի չեմպիոն հռչակվեցին երիտասարդների մրցաշարին մասնակցած Զիվան Ղազարյանն (48 կգ) եւ Գրիգոր Մխիթարյանը (52 կգ) եւ պատանիների մրցավեճի հաղթող Էդիկ Պետրոսյանը (87 կգ):

Արծաթե մրցանակակիրներ դարձան երիտասարդական մրցաշարի մասնակիցներ Մաքսիմ Մանուկյանը (57 կգ), պատանեկան առաջնությունում հանդես եկած Քնարիկ Ստամբուլցյանը (40 կգ) եւ Ալբերտ Սարգսյանը (87 կգ-ից բարձր): Բրոնզե մեդալներով պարգեւատրվեցին Ռոզա Խաչատրյանը (52 կգ), Արթուր Հակոբյանը (74 կգ), Դավիթ Խաչատրյանը (48 կգ), Կարեն Մինասյանն (52 կգ) ու Հարություն Առաքելյանը (65 կգ):

## Հակոբյանը եզրափակեց լավագույն տասնյակը

Դուբայում ավարտված շախմատի մրցաշարում Վլադիմիր Հակոբյանը 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով 186 մասնակիցների մեջ զբաղեցրեց 10-րդ տեղը: Նույնպիսի արդյունքով Գաբրիել Սարգսյանը 13-րդն է: Ավարտական տուրում Հակոբյանը ոչ-ոքի խաղաց Աբհիջեթ Գուպտայի հետ, իսկ Սարգսյանը հաշտություն կնքեց Միխայլո Օլեքսիենկոյի հետ:

7,5 միավորով մրցաշարի հաղթող դարձավ ռուսաստանցի Ալեքսանդր Ռախմանովը, որը հաշտություն կնքեց Յուրի Կուզուբովի հետ: 8 շախմատիստներ հաղթողից հետ մնացին կես միավորով:

Հովիկ Հայրապետյանը 6 միավորով գրավեց 34-րդ տեղը: Նա ոչ-ոքի խաղաց Ռինատ Ջումաբաեւի հետ: Տիգրան Պետրոսյանը պարտվեց Պրասաննա Վիշնուին եւ 5 միավորով գրավեց 62-րդ տեղը: Նույնպիսի արդյունքով Լիլիթ Գալոյանը 76-րդ հորիզոնականում հանգրվանեց: Նա հաղթեց Ռամեզ Սամեյրին: Հայ շախմատիստներից ամենացածր արդյունքն իր օգտին գրանցեց Մարկ Բասենցյանը, որը մրցաշարում առաջին անգամ ոչ-ոքի խաղաց եւ 4,5 միավորով գրավեց 95-րդ տեղը: Նրա մրցակիցն Աբդուլվահաբ Աբդուլան էր:

## Արդյունքները գոհացուցիչ են



Հայաստանի դպրոցականների 22-րդ մարզական խաղերի ծրագրով Երեւանում անցկացվեցին հրաձգության մրցումներ: Ըստ Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի փոխնախագահ Գագիկ Ջոհրաբյանի, մարզիկները բավականին բարձր արդյունքներ են ցույց տվել, տարեցտարի ավելանում է հրաձիգների քանակը:

10 մ օդամղիչ հրացանով վարժությունում բոլորից դիպուկը Հրաչ Բաբայանն էր: Աղջիկների մրցումներում հաղթող ճանաչվեց Սուսաննա Հովհաննիսյանը: 10 մ վազող թիրախ, նորմալ վազք վարժությունում չեմպիոններ դարձան Արթուր Պետրոսյանն ու Լիլիթ Մկրտչյանը: Նրանք հաղթող ճանաչվեցին նաեւ նույն վարժության խառը վազք մրցաձեւում:

10 մ օդամղիչ ատրճանակով վարժությունում դիպուկ կրակոցներով աչքի ընկան Զավեն Իգիթյանն ու Սուսաննա Ներսիսյանը:

## Եզրափակիչի առաջին մասնակիցը «Շիրակն» է

Գյումրիում «Միկայի» հետ կիսաեզրափակիչի պատասխան հանդիպումն ավարտելով գոլազուրկ ոչ-ոքի, «Շիրակը» 3-րդ տարին անընդմեջ իրավունք ստացավ եզրափակիչում վիճարկելու Հայաստանի գավաթը: Եզրափակիչի ուղեգրի հարցը փաստորեն որոշվեց մրցակիցների առաջին խաղում, որում «Շիրակը» հաղթել էր 1-0 հաշվով: Եզրափակիչում «Շիրակի» մրցակիցը հայտնի կդառնա այսօր կայանալիք «Փյունիկ»-«Գանձասար» խաղում: Հիշեցնենք, որ Կապանում կայացած առաջին խաղում «Փյունիկը» հաղթել էր 1-0 հաշվով:

## Հայաստանը կներկայացնեն 5 մարզիկներ

Այսօր Մոսկվայում մեկնարկող սպորտային մարմնամարզության Եվրոպայի առաջնությունում Հայաստանը կներկայացնեն 5 մարմնամարզիկներ: Արթուր Դավթյանն ու Սերոբ Սողոմոնյանը հանդես կգան բազմամարտում: Եվրոպայի կրկնակի մրցանակակիր Հարություն Մերդինյանը կմասնակցի նժույգաթափերի վրա վարժություններին, իսկ Վահագն Դավթյանն ու Արթուր Թովմասյանը հանդես կգան օղակների վրա վարժություններում:

## Համեստ արդյունք

Խորվաթիայի Պորեչ քաղաքում անցկացված սուսերամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում հայաստանցի 5 սուսերամարտիկներից համեմատաբար հաջող հանդես եկավ Էմիլ Դանիելյանը: Ճկասուսերակիրների մրցաշարի նախնական փուլում տոնելով 4 հաղթանակ, Էմիլը եզրափակիչում պարտվեց ճապոնացի սուսերամարտիկին եւ 128 մասնակիցների մեջ գրավեց 55-րդ տեղը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Սարաթ» ՍՊԸ ղեկավարությանը**

*Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սարաթ» ՍՊԸ (այսուհետ «Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2012թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական ծանոթությունները:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդնում եւ կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաեւ համապատասխան հաշվապահական գնահատականների օգտագործում:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է ,որ մենք հետեւենք էթիկայի համապատասխան պահանջներին եւ աուդիտը պլանավորենք ու իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից,ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության,ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք,որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են եւ համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակն առ 31-ը դեկտեմբերի 2012թ., ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

***Տնօրեն՝*** ***Ա.Պողոսյան***

***Խմբի ղեկավար աուդիտոր՝*** ***Ա.Պողոսյան***

***05.04.2013թ.***

| | |
|---|---|
| *Կազմակերպության անվանումը* | *«Սարաթ» ՍՊԸ* |
| *Փաստացի գործունեության տեսակը* | *Շահումով խաղի կազմակերպում* |
| *Պետական ռեգիստրի գրանցման համարը* | *264.110.04760* |
| *ՀՎՀՀ* | *00057235* |
| *Գտնվելու վայրը* | *ք. Երեւան, Դավիթաշեն 1 թաղ.,18 շենք բն.36* |
| *Փաստացի գործունեության հասցեն* | *ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 3-րդ հատվածի թիվ 6՝59.6 քմ. Տնտեսական շինություն* |

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | ծանոթ. | 2011թ. | 2012 թ. |
|---|---|---|---|
| Իրացումից հասույթ | 6 | 69965 | 82191 |
| Վաճառքի ինքնարժեք | 7 | (36107) | (45739) |
| **Համախառն շահույթ** | | **33858** | **36452** |
| Իրացման ծախսեր | 9 | (1165) | - |
| Վարչական ծախսեր | 8 | (32540) | (35633) |
| Գործառնական այլ ծախսեր | | - | (6) |
| **Գործառնական շահույթ** | | **153** | **813** |
| **Շահույթ/(վնաս) մինչեւ շահութահարկով հարկումը** | | **153** | **813** |
| Շահութահարկի գծով ծախս | | - | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇԱՀՈՒՅԹ(ՎՆԱՍ) | | 153 | 813 |

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ՍՊԸ մասնակիցների ժողովի կողմից 05.04.2013թ. եւ ստորագրվել են նրանց անունից:

***Տնօրեն՝*** ***Ա. Վարդանյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | ծանոթգր | 31.12.10թ. | 31.12.11թ. | 31.12.12թ. |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 10 | 3059 | 1645 | 388 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | | - | | |
| Կանխավճարներ ընթացիկ հարկերի գծով | 11 | 268 | 119 | 1189 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **3327** | **1764** | **1577** |
| Հիմնական միջոցներ | 12 | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 13 | 2083 | 2083 | 2083 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **2083** | **2083** | **2083** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **5410** | **3847** | **3660** |
| Կարճաժամկետ փոխառություններ | | - | - | - |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով | | 116 | - | - |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **116** | **-** | **-** |
| Բաժնետիրական կապիտալ | | 1050 | 1050 | 1050 |
| Չբաշխված շահույթ[/(Կուտակված վնաս)] | 14 | 3358 | 1911 | 1724 |
| Այլ պահուստներ | | 886 | 886 | 886 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | 5294 | 3847 | 3660 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ եւ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | 5410 | 3847 | 3660 |

***Տնօրեն՝*** ***Ա. Վարդանյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | կանոնադրական կապիտալ | չբաշխված շահույթ/(կուտակված վնաս) | Պահուստային կապիտալ | ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|
| 2010թ. դեկտեմբերի 31 | 1050 | 3358 | 886 | 5294 |
| Հաշվետու տարվա շահույթ | 1050 | 153 | | 153 |
| Շահաբաժին | | (1600) | | (1600) |
| **2011թ. դեկտեմբերի 31** | **1050** | **1911** | **886** | **3847** |
| Հաշվետու տարվա շահույթ | | 813 | | 813 |
| Շահաբաժին | | (1000) | | (1000) |
| **2012. դեկտեմբերի 31** | **1050** | **1724** | **886** | **3660** |

***Տնօրեն՝*** ***Ա. Վարդանյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| Հազար դրամ | 2011 թ. | 2012 թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ** | **3059** | **1645** |
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր* | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայութ. Իրացումից | 69965 | 82191 |
| Գործառնական այլ գործունեությունից | | |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **69965** | **82191** |
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր* | | |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | 29156 | 37926 |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | 9330 | 9417 |
| Վճարումներ բյուջե | 29001 | 32300 |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ | 2280 | 2799 |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր | 12 | 6 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **69779** | **82448** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **186** | **(257)** |
| Վճարված շահաբաժիններ | 1600 | 1000 |
| **Ընդամենը ֆինանսական գործունությունից ելքեր** | **1600** | **1000** |
| **Ֆինասական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1600)** | **(1000)** |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1414)** | **(1257)** |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **1645** | **388** |

***Տնօրեն՝*** ***Ա. Վարդանյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

# Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Խասաս» ՍՊԸ ղեկավարությանը**

*Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խասաս» ՍՊԸ (այսուհետ «Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝առ 31 դեկտեմբերի 2012թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական ծանոթությունները:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդնում եւ կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաեւ համապատասխան հաշվապահական գնահատականների օգտագործում:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է ,որ մենք հետեւենք էթիկայի համապատասխան պահանջներին եւ աուդիտը պլանավորենք ու իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում,որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ:Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից,ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության,ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության,ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են եւ համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակն առ 31-ը դեկտեմբերի 2012թ., ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

***Տնօրեն՝*** ***Ա.Պողոսյան***

***Խմբի ղեկավար աուդիտոր՝*** ***Տ.Մանուկյան***

***05.04.2013թ.***

| | |
|---|---|
| *Կազմակերպության անվանումը* | *«Խասաս» ՍՊԸ* |
| *Փաստացի գործունեության տեսակը* | *Շահումով խաղի կազմակերպում* |
| *Պետական ռեգիստրի գրանցման համարը* | *271.110.02835* |
| *ՀՎՀՀ* | *01236089* |
| *Գտնվելու վայրը* | *ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գառնի* |
| *Փաստացի գործունեության հասցեն* | *ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վ. Պտղնի, Նոր թաղամաս, 1-ին փողոց, թիվ 57 հողամասի թիվ 1 տնտ. շինություն* |
| | *ՀՀ Կոտայքի մարզ, գ. Զովունի, բնակելի կառուցապատման հողամաս տնտեսական շինությունով* |

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | ծանոթ. | 2011թ. | 2012 թ. |
|---|---|---|---|
| Իրացումից հասույթ | 6 | 111373 | 129934 |
| Վաճառքի ինքնարժեք | 7 | (47985) | (60404) |
| **Համախառն շահույթ** | | **63388** | **69530** |
| Վարչական ծախսեր | 8 | (60469) | (69301) |
| Գործառնական այլ ծախսեր | | - | - |
| **Գործառնական շահույթ** | | **2919** | **229** |
| **Շահույթ/(վնաս) մինչեւ շահութահարկով հարկումը** | | **2919** | **229** |
| Շահութահարկի գծով ծախս | | | |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ(ՎՆԱՍ)** | | **2919** | **229** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | | |
| ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇԱՀՈՒՅԹ(ՎՆԱՍ) | | 2919 | 229 |

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ՍՊԸ մասնակիցների ժողովի կողմից 05.04.2013թ. եւ ստորագրվել են նրանց անունից:

***Տնօրեն՝*** ***Ա. Գալսյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***. Մկրտումյան***

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | ծանոթգր | 31.12.10թ. | 31.12.11թ. | 31.12.12թ. |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 9 | 6206.7 | 475 | 4731 |
| Տրված կանխավճարներ | | - | - | 230 |
| Կանխավճարներ ընթացիկ հարկերի գծով | 10 | 144.3 | 5795 | 338 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **6351.0** | **6270** | **5299** |
| Հիմնական միջոցներ | 11 | - | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 12 | 5416.0 | 5416 | 5416 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **5416.0** | **5416** | **5416** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **11767.0** | **11686** | **10715** |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | - | - | - |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | | - | - | - |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **-** | **-** | **-** |
| Բաժնետիրական կապիտալ | | 50.0 | 50 | 50 |
| Չբաշխված շահույթ[/(Կուտակված վնաս)] | 13 | 9440.0 | 9359 | 8388 |
| Այլ պահուստներ | | 2277.0 | 2277 | 2277 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | 11767.0 | 11686 | 10715 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ եւ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | 11767.0 | 11686 | 10715 |

***Տնօրեն՝*** ***Ա. Գալսյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | կանոնադրական կապիտալ | չբաշխված շահույթ/(կուտակված վնաս) | Պահուստային կապիտալ | ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|
| 2010թ. դեկտեմբերի 31 | 50 | 9440 | 2277 | 11767 |
| Հաշվետու տարվա շահույթ | | 2919 | | 2919 |
| Շահաբաժին | | (3000) | | (3000) |
| **2011թ. դեկտեմբերի 31** | **50** | **9359** | **2277** | **11686** |
| Հաշվետու տարվա շահույթ | | 229 | | 229 |
| Շահաբաժին | | (1200) | | (1200) |
| **2012. դեկտեմբերի 31** | **50** | **8388** | **2277** | **10715** |

***Տնօրեն՝*** ***Ա. Գալսյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| Հազար դրամ | 2011 թ. | 2012 թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ** | **6207** | **475** |
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր* | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայութ. Իրացումից | 111371 | 129934 |
| Գործառնական այլ գործունեությունից | 1 | - |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **111372** | **129934** |
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր* | | |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | 38249 | 49381 |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | 11414 | 12642 |
| Վճարումներ բյուջե | 61680 | 59456 |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ | 2762 | 2999 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **114104** | **124478** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(2732)** | **5456** |
| *Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր* | | |
| Ստացված վարկերից եւ փոխառություններից | 3000 | - |
| **Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր** | **3000** | **-** |
| **ֆինանսական գործունությունից ելքեր** | | |
| Վճարված շահաբաժիններ | 3000 | 1200 |
| Ստացված վարկերի եւ փոխառությունների մարումից | 3000 | - |
| **Ընդամենը ֆինանսական գործունությունից ելքեր** | **6000** | **1200** |
| **Ֆինասական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(3000)** | **(1200)** |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(5732)** | **4256** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | - | - |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **475** | **4731** |

***Տնօրեն՝*** ***Ա. Գալսյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

# Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Էկաս» ՍՊԸ ղեկավարությանը**

*Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էկաս» ՍՊԸ (այսուհետ «Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝առ 31 դեկտեմբերի 2012թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական ծանոթությունները:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդնում եւ կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաեւ համապատասխան հաշվապահական գնահատականների օգտագործում:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետեւենք էթիկայի համապատասխան պահանջներին եւ աուդիտը պլանավորենք ու իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում,որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից,ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են եւ համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները,բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակն առ 31-ը դեկտեմբերի 2012թ.,ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

***Տնօրեն՝*** ***Ա.Պողոսյան***

***Խմբի ղեկավար աուդիտոր՝*** ***Ա.Սիրեկանյան***

***04.04.2013թ.***

| | |
|---|---|
| *Կազմակերպության անվանումը* | *«Էկաս» ՍՊԸ* |
| *Փաստացի գործունեության տեսակը* | *Շահումով խաղի կազմակերպում* |
| *ՀՎՀՀ* | *01401421* |
| *Պետական ռեգիստրի գրանցման համարը* | *271.110.03430* |
| *Գտնվելու վայրը* | *ք. Երեւան, Դավթաշեն 1թ.,32շ.բն.71* |
| *Փաստացի գործունեության հասցեն* | *ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարսեր, Երեւան-Սեւան խճուղի 3* |
| | *ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ,17 փողոց,թիվ 2 բնակելի տան մաս* |

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | ծանոթ. | 2011թ. | 2012 թ. |
|---|---|---|---|
| Իրացումից հասույթ | 6 | 117893 | 135688 |
| Վաճառքի ինքնարժեք | 7 | (52723) | (62844) |
| **Համախառն շահույթ** | | **65170** | **72844** |
| Վարչական ծախսեր | 8 | (64351) | (72746) |
| **Գործառնական շահույթ** | | **819** | **98** |
| **Շահույթ/(վնաս) մինչեւ շահութահարկով հարկումը** | | **819** | **98** |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ(ՎՆԱՍ)** | | **819** | **98** |
| ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇԱՀՈՒՅԹ(ՎՆԱՍ) | | 819 | 98 |

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ՍՊԸ մասնակիցների ժողովի կողմից 04.04.2013թ. եւ ստորագրվել են նրանց անունից:

***Տնօրեն՝*** ***Ա. Թարզյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | ծանոթգր | 31.12.10թ. | 31.12.11թ. | 31.12.12թ. |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 9 | 5862 | 4350 | 3854 |
| Կանխավճարներ ընթացիկ հարկերի գծով | 10 | 772 | 1318 | 412 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **6634** | **5668** | **4266** |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | | |
| Հիմնական միջոցներ | 11 | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 12 | 5417 | 5417 | 5417 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **5417** | **5417** | **5417** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **12051** | **11085** | **9683** |
| Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով | | 297 | - | - |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 13 | - | - |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **310** | **-** | **-** |
| Բաժնետիրական կապիտալ | | 50 | 50 | 50 |
| Չբաշխված շահույթ[/(Կուտակված վնաս)] | 13 | 11476 | 10820 | 9418 |
| Այլ պահուստներ | | 215 | 215 | 215 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | 11741 | 11085 | 9683 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ եւ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | 12051 | 11085 | 9683 |

***Տնօրեն՝*** ***Ա. Թարզյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| հազար դրամ | կանոնադրական կապիտալ | չբաշխված շահույթ/(կուտակված վնաս) | Պահուստային կապիտալ | ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|
| 2010թ. դեկտեմբերի 31 | 50 | 11476 | 215 | 11741 |
| Հաշվետու տարվա շահույթ | | 819 | | 819 |
| Շահաբաժին | | (1475) | | (1475) |
| **2011թ. դեկտեմբերի 31** | **50** | **10820** | **215** | **11085** |
| Հաշվետու տարվա շահույթ | | 98 | | 98 |
| Շահաբաժին | | (1500) | | (1500) |
| **2012. դեկտեմբերի 31** | **50** | **9418** | **215** | **9683** |

***Տնօրեն՝*** ***Ա. Թարզյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

**ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| Հազար դրամ | 2011 թ. | 2012 թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ** | **5862** | **4350** |
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր* | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայութ. Իրացումից | 117893 | 135688 |
| Գործառնական այլ գործունեությունից | | |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **117893** | **135688** |
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր* | | |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | 40332 | 49501 |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | 14018 | 14703 |
| Վճարումներ բյուջե | 60715 | 67130 |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ | 2859 | 3349 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **117930** | **134684** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(37)** | **1004** |
| *Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր* | | |
| Ստացված վարկերից եւ փոխառություններից | 1600 | |
| **Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր** | **1600** | |
| Վճարված շահաբաժիններ | 1475 | 1500 |
| Ստացված վարկերի եւ փոխառությունների մարումից | 1600 | |
| **Ընդամենը ֆինանսական գործունությունից ելքեր** | **3075** | **1500** |
| **Ֆինասական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1475)** | **(1500)** |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1512)** | **(496)** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | | |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **4350** | **3854** |

***Տնօրեն՝*** ***Ա. Թարզյան***

***Գլխ. հաշվապահ՝*** ***Ա. Մկրտումյան***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 16.4.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: